

ДМЧ  
188 /

1894

55.

WT 1406 2000

ԸՆԴՀԱՆ

27037. ահ.

203.7  
S-37  
ՄՀՀ

ԱՐԵՎԱԿ ՏԵՐ ՄԻՔԵԼԵԱՆ.


ՃԱԿ  
188

# ՊՍԱԿԻ

ՍՈՒՐԲ ԽՈՐԴՈՒՐԴԸ

(  
10/  
10/  
10/  
10/  
10/  
)

(Աբովյան 1894թ. «Աբովյան»)



103



20484-60

ԻՒՐ ՍԻՐԵԼԻ ԾՆՈՂԱՑ

ՂԱԶԱՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԵՒ

ԱՅՆԴՈՒԽՏ ԹՈՒՄԱՆԵԱՆ

(ՄԵԼԻՔ ՀԱՅԱՁԵԱՆ)

ՏԵՐ ՄԻՔԵԼԵԾՆԵՐԻՆ

ՈՐԴԻԱԿԱՆ ԱՆՇԱՌԻՌՈՒԹԵ ԱՄՐ

ԽՈՒԹՈՒՄՔ

28 187



188-2001

ՅՈՒԹԵՐԱ ՎԱՅՐԻ ԴԱԿ

ԾԱՇԽԱԲԱՐԱՔ ԳՈՅԱՐ

45

ԺՈՂՈՎՐԴՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐ

(ՀԱՅՈՒԹԱՅ ՀԱՅԱՐ)


ՄԵԼԻՄԱՅԵՐԱՅԱԿԱՆ ԴՐԱ

ԴԱՎ ՎԱՐԱՐԱՆԱՌԵՐԱ ՄԱՅԱՐԻԱ

ՀԱՅՈՒԹԱՅ

ՀԱՅՈՒԹԱՅ

## ՊՍԱԿԻ Ս. ԽՈՐՀՈՒՐԴԸ



Նչքան նշանաւոր տեղ է բըռ-  
նում ընտանիքը բարոյական  
աշխարհում կազմելով նորա  
սկիզբն ու հիմունքն այնքան  
բարձրացրեց և սրբագործեց  
նորան քրիստոնէ ութիւնը: Ար-  
դէն միակնութեան հաստատութիւնը տուաւ  
ամուսնութեան այն դիրքն, որ համապատաս-  
խանում է ընտանիքի էութեան: Խնչպէս  
սուրբ է ընտանիքն, այնպէս և քրիստոնէու-  
թիւնը սրբութեան վրայ հիմնեց նորա կազ-  
մակերպութիւնը: Միակնութեամբ հաւասա-  
րութիւն մտցրեց երկու սեռի անհատների

մէջ և ապա պատկն եկեղեցական ու խորհուրդի դարձնելով, դժուաւ նորան առաջաւծային արքայութեան փոքրիկ պատկերի մէջ։ Պատկի նշանակութիւնն այնքան մէծ է քրիստոնէական վարդապետութեան մէջ, որ Պօղոս առաքեալն ասումէ։ «Արք, սիրեցէք զկանայս ձեր, որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն նորա . . . որ սիրէ գիին իւր, զանձն իւր սիրէ։ զի ոչ ոք երբէք ատեայ զանձն իւր, այլ սնուցանէ և դարմանէ զնա, որպէս և Քրիստոս զեկեղեցի։ զի անգամք եմք մարմնոյ նորա, ի մարմնոյ նորա և յոսկերաց նորա, վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկորին ի մարմին մի։ Խորհուրդո այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս և յեկեղեցի»։ Պօղոս առաքեալն այնքան բարձրացնումէ պատկի խորհուրդն, որ մինչև անգամ այր և կնոջ նմանեցնումէ Քրիստոսին և իւր եկեղեցին։

Դեցուն։ Այդ նմանութեան սկիզբն գրաւ Քրիստոս, երբ ինքեան վիճակ անուանեց և իւր աշակերտներին «մանկունք առագաստի»։ Ուստի և իրաւամբ շեշտումէ առաքեալը թէ՝ «մեծ է խորհուրդս այս», մինչգեռ մենք կարող ենք ասել՝ մեծ է և առաւել քան մեծ է, որպէս ոչ ոք ոչ ոք բան չէ արժանացել այդ բարձր նմանութեան։ Միմիայն այդ սուրբ միութեան մէջ է, որ կարող ենք ասել՝ «Կին՝ փառք առն իւրոյ է, և Ծղամարդի յարաբերութիւնը գէպի իւր կինն այնքան սուրբ է, նորա սէրն այնքան բարձր է, որ քան սուրբ է և բարձր Քրիստոսի վերաբերմունքը գէպի Եկեղեցին։ ուստի և Պարտին արք սիրել զիւրեանց կանայս իրրե զիւրեանց մարմինս . . . զի ոչ ոք երբէք ատեայ զանձն իւր, այլ սնուցանէ և դարմանէ, որպէս և Քրիստոս զեկեղեցի»։

Եկեղեցին ճանաչեց ամուսն սկան կողակցութեան սրբութիւնն, ուստի և չտառամունց

ընդունելու Ա. Գրքի ժողովածուի մէջ այն բանաստեղծական գեղեցիկ գրուածքն, որ իրապէս գովասանումէ տղամարդի և կնոջ սէրն ու գեղեցկութիւնը. այդ այն է՝ որ կոչւումէ «Երգ Երգոց» (Եփր Հաշիրիմ), այսինքն ամենալաւ երգ։ Հարկաւ, միայն սուրբ զգացմունքներով պէտքէ կարգալ այդ գրուածքն, որ մեկնութիւնների մէջ վերաբերումէ թէ Քրիստոսին և Եկեղեցուն և թէ ամուսիններին։ Եթէ չկայ սուրբ զգացմունք, մարդու էութեան համապատասխանող բարեկիրթ զգացմունք՝ ամենամեծ սրբութիւնն անգամ խաղ կդառնայ։

Այդպէս և ս. Գրիգոր Նորեկացին ասումէ իւր համառօտ մեկնութեան մէջ (եր. 393). «Նաև սուրբ տմուսնութիւն և սէր փեսայի ընդ հարսին և հարսին լնդ փեսային, որ ազատ լինի ի պիզծ խառնից, յէ օտար ի Հոգւոյն շնորհաց, որով և խորհուրդն ի Քրիստոս և յեկեղեցի աւարտի»։

«Երգ՝ որ զսուրբ ամուսնութիւն պէծ

պիլծ խառնակութեամբ և չար գործովք, զեկեղեցւոյ խորհուրդ պղծէ, և զՔրիստոս անարգէ, որ այսմ օրինակն է»։

Ուստի և նոյն երանելին գովաբանումէ Եկեղեցին իւր մի գեղեցիկ գանձի մէջ (եր. 371) հարսանեկան բառերով. «Ուրախ լեր դշխոյ հարսն պանձալի, պատկաւոր, մեծ զարմանուհի, բազմազաւակ կուսութեամբ բերկրեալ»։

«Բաբունն լուսոյ հզօր թագաւոր Փեսայն երկնաւոր՝ անձառ խորհրդով ի հանգէս խլն-ճոյից պարու կարգեաց քեզ կանոնո անփոփոխելիս»։

Ս. Գրիգոր Տաթևացին մի առ մի բացատրումէ պսակի բարձր նշանակութիւնը. նա պարզումէ խորհուրդն, ասելով՝ «Խորհուրդ է ծածկելոյ իրաց յայտնութիւն» այսինքն այն գաղտնիքն, որ մենք չենք տեսնում, ներկայանումէ մեզ իրական արտայայտութեամբ։ Այդ իրական արտայայտութիւնը մեկնումէ նա ասելով իւր «Ամրան քարողներում» (էջ.

199). «Եւ այս մարմնաւոր հարսանիքս է խորհուրդ հոգեոր հարսանեացն և միաւոթեան զոգւոյս առ Աստուած, որպէս ասէ առաքեալն»։ Ուստի և խնամախօսներին նմանեցնումէ մարգարէներին, իսկ փեսաւէրներին ու հարմածուներին նմանեցնումէ առաքեալներին և նոցա հետեւող հայրերին։ Եւ «Նշան մատանոյն՝ հաւատոն է», որ զնի ի մատոն՝ որ է զանազանող գործոյն։ Մատի վրայ է մատանին, սակայն նա ևս ընդարձակ նշանակութիւն ունի։

«Մատանին է ի մատն յայն՝ որ ունի զերակ սրտին։ նոյնպէս և հաւատք մեր՝ առ Քրիստոս է ջերմ սիրավ սրտի հաստատեալ։ Եւ ինչպէս մատանին օղակ է և ծայր չունի, այնպէս էլ ամուռ է ամաւանութեան կապակցութիւնը։ Ոսկի է մատանին դոցա կապողն։ ոսկու նման մաքուր պէտքէ լինի և երկուսի մէրը։

Հայաստանեացց Նկեղեցին ճանաչելով պըսակի սրբութիւնը, գործնականապէս էլ հա-

կասութեան մէջ չէ ընկնում՝ արգելելով նա հոգեորականներին ամուսնանալ։ այլ ակզբից որոշել է երկու դաս—կուսակրօն և ամուսնացեալ, որով մի որոշ կարգ է դրել իւր պաշտօնեաների մէջ ազատ՝ անհատների կամայականութիւններից։ Դորանով սըրբագործում է թէ պսակն և թէ ինքնազութեան բարձր առաքինութեան ճանապարհ է թողնում առ այդ կոչուածների համար։ Եւ ինչպէս որ ճշմարտութիւն է աշխարհականների համար թէ առանց կնոջ աւերէ տունն։ և տան շինութիւն կինն է։ և տուն ունիս, ասելով հասկանում են պսակուած լինելը, ոյնպէս էլ կուսակրօն և կեղականի համար տունը Եկեղեցին է։



արդէն, որ ամուսնութիւնը չի կարող մասնաւոր անհատական նպատակ ունենալ. Եթէ այդպէս լինէր, նա չէր համեմատուիլ Քրիստոին և Եկեղեցուն։ Այլ ինչպէս որ մեծնշանակութիւն ունի Քրիստոսի և Եկեղեցու կապակցութիւնն Աստուծոյ արքայութեան համար, այնպէս էլ ամուսնական ընտանեկան կեանքը մի անհրաժեշտ արքը է Աստուծոյ արքայութեան իրականացման համար։ Ընտանիքը պէտք լինի բարոյական աշխարհի փոքրիկ նկարը կամ մանրաշխարհը։

Վերլուծելով ամուսնութեան այդ ընդհանուր նշանակութիւնը, կստանանք ամուսնունութեան նպատակի որոշումը։ Կնոջ ստեղծագործութիւնն եղաւ ըստ Աստուծոյ տնօրէնութեան՝ թէ «ոչ է բարոք մարդոյդ միայն լինել» արածցուք դմա օգնական ըստ դմա»։<sup>1</sup> Ուրեմն տղամարդի և կնոջ կենակ-

ցութիւնը տարր է կազմում Աստուծոյ տրարչական տնօրէնութեան։ Քրիստոս եկաւ փրկելու մարդկութիւնն և յառաջ վարելու դէպի Աստուծոյ արքայութիւնը. Նա ինքն տսումէ մերստին այն, ինչ որ ի սկզբանէ հաստատուել էր. սակայն և յիշումէ այն տուաքինութիւնն, որ իրագործումեն նոքա «որսնց տուեալ է», որոնք և «են ներքինիք որ զանձինս իւրեանց արարին ներքինիո վասրմ արքայութեան երկնից»։ Այստեղից արդէն ձշգւումեն ս. Գրիգոր Տաթևացու որոշած երեք նպատակները. մէկ՝ «առ ի խորշելոյ ի պունկութենէ», երկրորդ՝ որդենութեան համար. և երրորդ՝ ցանկութիւնը զապելու և ամքելու համար։

Լաւ զի «ելով այդ երեք կետերը, կտեսն ոք որ թէ որդենութիւնն և թէ միւս

1 Աստթ. ԺԹ. 11, 12. Տես. և ՀԹ. Է. 8—9. «Բայց ամուրեացն և այրեացն ասեմ. լաւ է նոցաթէ կայցեն իրբե զիս. Ապա թէ ոչ ունիցին ժոյժ, ամուսնասցին. զի լաւ է ամուսնանալ քան զշեռնուլ։»

երկու նպատակները միջոց ևն տալիս մարդուն Աստուծոյ արքայութեան համար գործելու և այդ իրականացնելու։ Որչափ հաւկանանք տղամարդի և կնոջ կենակցութեան նշանակութիւնն, այնքան սուրբ կատչենք սիրոյ յարաբերութիւնն, որպէս զի օր ըստ օրէ կարողանանք մեր աստուածադիր կոչման ծառայելու։ Մարդու կոչումն է՝ կամ կուսական կենակցութեամբ և կամ անձնանուիրութեամբ միջոց գտնել առաւել յաջողութեամբ Աստուծոյ արքայութեան համար գործելու։

Այդ նպատակով նա է միայն զիմում ամուսնական կենակցութեան, ով որ զգումէ միայնակ գործելու թուլութիւն և անյարմարութիւն և կարօտումէ ամուսն ական օգնականութեան կամ գործակցութեան։ Միայն թէ սուրբ է նպատակը, որբութեամբ էլ պէտքէ ձգտել դէպի այն և սուրբ պահել այն ընթացքն, որ տաճումէ գէպի այդ նըպատակը։ Որչափ մեղանչէ մարդ այդ կենակցութեան մէջ՝ չկատարելով քրիստոնէական

ամենապարզ առաքինութիւններն, որպէս սէր, ներողամտութիւն, պարկեշտութիւն, հէզութիւն, հաւասարութիւն և լի, այնքան մշղանչումէ նա յիշեալ բարձրագոյն նպատակի գէմ և ինքն ինքեան դատապարառմ։ Աստուած միացնումէ երկուսին և մի մարմին գործնում, մի սսին էլ պէտքէ գործեն և ապրեն, և ինչպէս «Քրիստոս սիրեաց զեկեղեցի», և զանձն իւր մատնեաց վասն նորա»։ այնպէս էլ տղամարդը պէտքէ սիրէ իւր կնոջ կատարեալ անձնուզութեամբ, զի «որ սիրէ զիին իւր՝ զանձն իւր սիրէ»։ իսկ իւր անձն ատողն առաջին մշղապարտն է Աստուծոյ առաջ իբրև Աստուծոյ շնորհն արհամարհող։ Նոյն յարաբերութիւնը պէտքէ պահէ և կինը։ Երկուսն էլ իրար ուղղող են և բժշկող։ Մի խօսքով տղամարդի և կնոջ յարաբերութեան կատարելատիպը պէտքէ լինի Քրիստոսի և իւր եկեղեցու յարաբերութիւնն, որպէս զի կարենան վայելել Հայոց եկեղեցու օրհնութեան շնորհները։



ՊՍԱԿԸ ԼՈՒԾԵԼ ԿԱՐԵԼԻ<sup>Հ</sup> Ե ԸՍՏ ՔՐԻՍՏՈՍԻ  
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ:

Արդէն մինչեւ այժմ բոլոր ասուածներից կարող ենք և ուրիշ հարցերի համար հետևութիւններ անել սակայն նախ ուշադրութեան առնենք Քրիստոսի վարդապետութիւնը: Քաղենք այդ ինդրին վերաբերեալ վկայութիւնները. Մատթէոս աւետարանիչը գրումէ. ամուսիններն «ոչ են երկու, այլ՝ մի մարմին, արդ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ»: (ԺԹ, 6):

Պուկ. ԺԶ, 18. կարդումենք. «Ամենայն որ արձակէ զկին իւր՝ և առնէ այլ շնայ. և որ զարձակեալն առնէ, շնայ»:

Նոյնը պատմումէ և Մարկոս Փ, 11. «Եթէ այր արձակեսցէ զկին իւր և արասցէ այլ շնայ: Եւ կին, թէ ելցէ յառնէ իւրմէ և եղիցի առն այլում շնայ»: Ուստի և «զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ»: Մակայն բերուած վկայութիւններից պատ կայ մի այլ վկայութիւն ևս, որ չյիշեցինք: Այդ կարդումենք ըստ Մատթէոսի աւետարանի մէջ, որ է այս.

Պօղոս առաքեալն էլ ասումէ<sup>1</sup>:

«Կին առնակին ի կենդանի այր իւր կապեալ կայ օրինօք. իսկ եթէ մեռցի այրն, արձակեալ է յօրինաց առն: Ապա ուրեմն մինչ կենդանի է այրն, շուն կոչի, եթէ լինիցի առն այլում:...»:

Պարձեալ:

«Կնոջ յառնէ մի՛ մեկնել. ապա եթէ մեկնեսցի, անայր մնասցէ կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի, և առն զիին իւր մի՛ թողուցէ»:<sup>2</sup>

Այս բոլոր վկայութիւններից պարզապէս երկումէ, որ Քրիստոսի հրամանն է՝ «զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ»: Մակայն բերուած վկայութիւններից զատ կայ մի այլ վկայութիւն ևս, որ չյիշեցինք: Այդ կարդումենք ըստ Մատթէոսի աւետարանի մէջ, որ է այս.

«Ապաքէն ասացաւ. թէ որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն. բայց ես ասեմ

<sup>1</sup> Հռ. Ե, 2:

<sup>2</sup> Կորնթ. Ե, 11.

ձեզ թէ, ամենայն որ արձակէ, զիին իւր առանց բանի պոռնկութեան՝ նա տայ նմա շընալ և որ զարձակեալն առնէ՝ շնայ»:<sup>1</sup> Եւ դարձեալ.

«Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն փորձէին զնա, և ասէին թէ արժան իցէ ումեք արձակել զիին իւր ըստ ամենայն վնասու։ Պատասխանի ետ նոյց և ասէ. չիցէ ընթերցեալ ձեր՝ թէ որ հասաւաեացն ի սկզբանէ՝ արու և էդ արար զնոսա, և ասէ. վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր, և երթիցէ զհեա կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան ի մարմէն մի։ Ապա ուրեմն ոչեն երկու, այլ մի մարմին. արդ զօր Աստուած զուգեաց՝ մարդ մի՝ մեկնեացէ։ Ասեն ցնա. Իսկ Մովսէս ընդէլ պատուիրեաց մեզ տալ թուղթ մեկնելոյ և արձակելոյ։ Ասէ ցնոսա. Մովսէս վասն խըստաբառութեան ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր, այլ ի սկզբանէ ոչ եղեայնպէս։ Բայց ասեմ ձեզ, զի ամենայն որ ար-

ձակեացէ զիին իւր, և ոչ վասն պոռնկութեան, և առնիցէ այլ՝ շնայ, և որ զարձակեալն առնիցէ՝ շնայ։ Ասեն ցնա աշակերտքն իւր, թէ այդպէս ինչ վնաս իցէ ընդ այր և ընդ կին, լաւ է չամուսնանալ։ Եւ նա ասէ ցնոսա. ոչ ամենեքեան բաւական են այդմ բանի, այլ որոց տուեալէ» (ԺԹԱ. 3—11):

Որպէս զի լաւ հասկանանք այս երկու պարբերութիւններն և ուղիղ եղլ ակացութեան գանք, պէտք է պարզենք երեք ինդիրներ. նախ թէ ի՞նչ վիճակի մէջ էր արձակման տեսութիւնը չըեից մէջ. երկրորդ՝ թէ ի՞նչ է այդ պարբերութիւնների իմաստն ըստ բուն բնագրին. և երրորդ՝ թէ ի՞նչպէս են մեկնում մեր նախնիք։

... Բ. Որինաց մէջ (Ծի՛ 1—4) հրամայուած է, որ եթէ ամուսինը գտնէր իւր կնոջ մէջ «իրս անարգութեան», կարող էր արձակել նորան և արձակման թուղթ տալ և կինն այդ արձակման թղթով<sup>1</sup> կարող էր գնալ ուրիշ

թիւն զխորհուրդս քո, ասէ Տէր Ամենակալ։  
 զգոյշ լերուք յոգիս ձեր և մի թողուցուք»:  
 Բայց և՝ օրէնքի մէջ «իր անարգութեան»  
 անորոշ խօսք է, ուստի և միշտ վիճաբանու-  
 թեան առարկայ էր, թէ ինչ պէտքէ դորա-  
 տակ հասկանալ։ Քրիստոսի ժամանակ Շամ-  
 մայի դպրոցը պնդումէր թէ դորա նշանա-  
 կութիւնն է շնութիւն և բարոյական աղտու-  
 մինչդեռ Հիմելի դպրոցն ասումէր՝ որ դորա  
 մէջ հասկացւումէ ամենայն ինչ, որ մարդուն  
 զիւր չէ գալիս։ Այս վերջինս է՝ որ ասուած  
 է փարիսեցիների կողմից «ըստ ամենայն վնա-  
 սու»։ Այսինքն հարցնումէին թէ կարելի՞ է  
 արձակել՝ եթէ պատճառը տղամարդի նկատած  
 մի որ և իցէ վնասակար կամ տհաճելի բան  
 լինի։ Այս հիմունքով արձակումը դառնում  
 էր մի սովորական ինչ և կինը խաղալիք էր  
 լինում տղամարդի ձեռքին, վասն զի եթէ մի-  
 ուրիշ կին զիւր գար ամուսնուն, այդ էլ պատ-  
 ճառ կինէր արձակման։ Պորա դէմէ, որ

1. Մաղաքիա. Բ, 16.

մարդու, իսկ եթէ վերջինս մեռներ, այդ կի-  
 ւը չէր կարող վերստին առաջին մարդուն  
 գնալ՝ իրու պղծուած։ Եթէ ամուսնացողը  
 խարեր՝ թէ իւր կինը կորցրելէ իւր կուսու-  
 թիւնը նախ քան պսակուին և տպացուցեն  
 նորա ստութիւնն ինքը պէտքէ պատժուէր,  
 իսկ եթէ ձիշդ լինէր, քարկոծ պէտք է լինէր  
 կինն իւր պղծութեան համար (Իի, 13—21).  
 Վերջապէս տուգանքի էր ենթարկում և բըռու-  
 նաբարուած աղջկայ հետ պսակում նա՝ որ  
 Ակումէր կոյս աղջկան։

Թէպէտե արձակումը շատ կամայական էր  
 դառնում՝ որովհետեւ մինչեւ անդամ անձնա-  
 կան ուխտադրութիւնը կարող էր պատճառ  
 գրուել արձակման<sup>1</sup>, սակայն միւս կողմից  
 պարզապէս յայտնուած է, որ Աստուած չէ  
 սիրում արձակումը։ «Զգուշացարուք յոգիս  
 ձեր, և զիին մանկութեան քոյ մի թողուր,  
 բայց եթէ առ ատել արձակեսցես, ասէ Տէր  
 Աստուած իսրայէլի, ծածկեսցէ ամբարշտու-

Քրիստոս ատումէ. «ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա ի պրաի իւրում։ Եթէ ակն քո դայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկեա ի քէն...»<sup>1</sup> Հարկաւ՝ հարցը տուելէին, որպէս զի Քրիստոս պատասխանէր ի նպաստ մէկ կամ միւս դպրոցին, որով և դայթակղութեան պատճառ լինէր մի կողմին։ Ընդ սմին արձակման օրէնքն որբան էլ անորոշ լինէր, յայտնի է սակայն, որ շնութեան պատճառով կնոջ քարկոծումէին շնացողի հետ<sup>2</sup>, մինչև անգամ այրման դէպք էլէ յիշլում<sup>3</sup>։ Փարիսեցիներն այսպիսի հանգամանքների մէջ էին առաջարկում Քրիստոսին իւրեանց հարցը։

Է. Քրիստոս համարումէ էին օրէնքի արձակման թոյլտութիւնը Հրեից խստասրտութեան հետևանք։ Մարկոսի և Պուկասու պատ-

1. Մատթ. Ե, 28, 29.

2. Ղետ. Ի, 10. Բ. Օր. ԻԲ 22. Եղեկ. ՓԶ, 38. 40. ԻԳ. 43.

3. Ծննդ. ԱՅ. 24.

առվժեան համաձայն՝ Քրիստոս շնութիւն է անուանում արձակուղի և արձակողի նոր ամուսնութիւնը. նա շեշտումէ՝ «զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ»։ Խօսքի ընթացքը նաև առաջին աւետարանի մէջ ցոյց է տալիս, որ Քրիստոս բացէ ի բաց մերժումէ և արգելումէ կին արձակել. նոյնը հաստատումէ և Մարկոսի պատմածով։ Նոյնը պնդումէ և Պօղոս առաքեալն, ինչպէս տեսանք, այնպէս որ Քրիստոսի խօսքերի եղրակացութիւնը մի և նոյնն է բոլոր զքերի մէջ։

Արդ՝ եթէ այդ այդպէս է, ինչպէս պէտքէ հասկանանք Քրիստոսի այն խօսքն, թէ «որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան՝ (կամ՝ ոչ վասն պոռնկութեան՝ և առնիցէ այլ շնայ)։ նա տայ նմա շնալ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ»։

Ուշադրութեան առնելով գրչադիր օրինակները, տեսնումէնք որ Հայոց թարգմանութիւնն այս կետում հարազատութեամբ չէ հասել մինչեւ մեզ. միմիայն այս երկտողում

տարբերութիւնները շատ բազմաթիւ են: Գլորչ  
չագրներից ոմանք ունին «արձակեսց!», «առ  
նիցէ», սակայն նշանաւոր է այս, որ երկու եր-  
կաթագիր օրինակներ № 362 և № 364 ու-  
նին Մատթ. Փթու, 9 «Ե ոչ վասն է առ է  
պոռնկութեան»: Դոցանից առաջինը դրուած  
է 1057 թուին, իսկ նոր դրչագիրների մէջ  
էլ կան դոցա համաձայն օրինակներ, որպէս  
№ 173 և 165:

Թիմեով յունական բնագիրներին, դանում  
ենք որ Ախայեան, Եփրեմեան Դուրլինեան և  
Ռոսսանեան երկաթագիր հին օրինակներն ու-  
նին «մէ էպի պոռնէյա», իսկ երկու նոր եր-  
կաթագիրներ ունին «պարեկտոս լոգու պոռ-  
նէյա». այս վերջինների հետ և մի քանի ու-  
րիշները կրկնում են Փթու զիսում՝ ևս «տայ  
նմա շնալք փոխանակ» «և առնիցէ այլ շնայ»:

Արդ: «մէ էպի պոռնէյա» թարգմանուած է  
«Ե ոչ վասն պոռնկութեան», իսկ «պարեկտոս  
լոգու պոռնէյա»—«առանց բանի պոռնկու-  
թեան»: Գիտնականներից ոմանք, ինչպէս օրի-

նակ պրօֆ. գոքտոր Վատաներիխ, թարգմա-  
նումէ Փթու զիսում «իցէ իսկ վասն պոռնկու-  
թեան», մինչդեռ Ես զիսում «լինէր իսկ ի պատ-  
ճառս պոռնկութեան»: Առաջինն այդպէս է  
թարգմանում և բողոքական պրօֆեսօր Վայց-  
գեկկեր, իսկ երկրորդը թարգմանումէ. «ամե-  
նայն, որ արձակէ զկին իւր, ի բաց առեալ  
զգէան պոռնկութեան, նա տայ նմա շնալ» ...  
Եւ իրաւ եթէ տղամարդը թողնէ իւր պոռնիկ  
կնոջ, նա առիթ չէ լինում նորա շնութեան,  
քանի որ արդէն շեղուած է կինը: Սակայն «Ե  
քանի արդէն շեղուած է կինը: Սակայն «Ե  
որ զարձակեալն առնէ՝ շնայ» ուրեմն արձա-  
կուածներին արգելումէ կրկին ամուսնանալ:  
Իսկ երկրորդ վկայութիւնն է. «ամենայն որ  
արձակեսցէ զկին իւր, իցէ իսկ վասն պոռնկու-  
թեան, և առնիցէ այլ շնայ, և որ զարձա-  
կեալն առնիցէ շնայ» հետեաբար մինչև ան-  
գամ պոռնկութեան համար բառանին կնոջ  
և ուրիշի հետ պատկանակ շնութիւն է, ըստ  
այսմ արգելումէ արձակեալ բառանին

Այսպիսով բուն բնագիրն ոչ մի տարա-

կուսանքի տեղիք չէ թողնում և վերջնակառնապէս արդելումէ կնոջ արձակումը:

Այժմ տեսնենք թէ ի՞նչպէս կարելի է հասկանալ մեր թարգմանութիւնն ինչպէս որ կայ: Տեսանք արդէն որ երկու տեսութիւններ կային Հրեաների մէջ: մէկն այն էր, թէ կարելի է կնոջն արձակել ամենայն տշաճելի գէպքի պատճառով: իսկ միւսը թէ արձակումը միայն պոռնկութեան համար պէտք է լինի: Եթէ Քրիստոս դոցանից մէկին ի նպաստ պատասխանէր, Փարիսեցիներն արդէն հասած կլինէին իւրեանց նպատակին: Սակայն նկատեցինք վերեւում որ նոյն իսկ Հին Կտակարանում Աստուծոյ առաջ մի տշաճելի բան է արձակումը, թէև Մովսիսական օրէնքով այդ թոյլարւումէր: Գիտենք և այս՝ որ շնութիւնն ամենամեծ չարազործութիւնն էր համարւում և ամենամեծ պատժի արժանանում: իսկ տասնաբանեայ պատուիրանների մէջ շնութիւնը դրուած է «մի սպանաներ—մի գողանապ»-ի մէջտեղը:

Քրիստոսին յայտնի էր այս բոլորն և նասկզբից իսկ պատասխանումէ: «զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ»: Փարիսեցիները չհասան իւրեանց վերսոյիշեալ նպաստավին, վերսափին հարց առաջարկեցին, յուսալով թէ Քրիստոս, քանի որ երկու ուղղութիւններն էլ մերժեց, սաիպուած հին օրէնքի դէմ կիսումէր և կդրգուիր ժողովրդուր: Նոքա ասացին: «Իսկ Մովսէս ընդէր պատուիրեաց մ.զ տալ թուղթ մեկնելոյ և արձակել»: «Վասն խստապրատութեան ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր, ասումէ Քրիստոս, այլ ի սկզբանէ ոչ եղև այնպէս»: Ըստ որում Մովսէսի հրամայածը միայն որոշ հանգամանքների մէջ յառաջացած բացառութիւն էր: Մինչգեռ Քրիստոս այդ այլ ևս չէ ընդունում: Նա վերականգնումէ Աստուծոյ պատուիրանն, ասելով վերսափին. «ամենայն որ արձակեսցէ զկին իւր՝ և ոչ վասն պոռնկութեան, և առնիցէ այլ՝ շնայ...»:<sup>1</sup> Ուրեմն Քրիստոս շնացող . Կամ այլապէս ասած. «Ամենայն որ արձա-

Է ամուսնում կինը թռղող և ուրիշի հետ  
պսակուողին, այլ և շեշտումէ վերջում: «Ե  
որ զարձակեալն առնիցէ՝ շնայ»: այսինքն ոչ  
իմէ ամենայն պատճառով (բատ ամենայն վրա  
նասու) կարիքի է արձակել, այլ միմիայն  
պոռնկութեան համար, սակայն երկրորդ ա-  
մուսնութիւնը երկուսի կինդանութեան ժա-  
մանակ՝ շնութիւն է: Եւ որովհետեւ շնութիւ-  
նը շատ մեծ մեղք է, ուստի բաժնուողները  
չեն կարող վերստին ամուսնանալ:

Մի և նոյնն է ասուած և Ե. զիսում: թէ  
արձակել նշանակումէ շնութեան պատճառ  
լինել, իսկ վերջի խօսքերը թէ «որ զարձա-  
կեալն առնէ՝ շնայ» վերջնականապէս արգե-  
լումէ արձակուածի կրկին ամուսնութիւնը,  
մանաւանդ որ ասելէ արդէն թէ: «Ամենայն  
որ հայի ի կին մարդ, առի ցանկանալոյ նմա,  
անդէն շնացաւ ընդ նմա ի պատի իւրում»: Դրո-  
րա հետ միայն վճռումէ, որ արձակումը կա-  
կեցէ զկին իւրա որ չէ արժան՝ բայց եթէ վասն  
պոռնկութեան, և առնիցէ այլ շնայ»:

Իտկ միմիայն մի ծայրայեղ դէպքում յա-  
ռաջանալ, այն է՝ կնոջ անբարոյականութիւ-  
նից: Ասկայն այդ էին ասում և Հրէից ուղ-  
ղաղատ օրէնսգէտները մինչդեռ Քրիստոս ու-  
ղումէ վերացնել այդ ներողամտութիւնն ։  
որ ալելէին նոյցա «խատասպութեան» պատ-  
ճառով: Ուստի և շեշտումէ՝ «Ե որ դարձա-  
կեալն առնէ՝ շնայ»: Այդ վտանգներով վրձ-  
ռապէս արգելումէ արձակումը, ցոյց տալով

2. Պէտքէ լաւ ուշագրութիւն դարձնել խօսքերի  
ձեփ վրայ: «Լուարուք զի ասացաւ առաջնոցն թէ  
Մի սպանաներ, զի որ սպանանէ՝ պարտական լիցի  
գատաստանի: Այլ ես ասեմ ձեզ, Եթէ ամենայն  
որ բարկանայ եղաք իւրում տարապարտուց, պար-  
տաւոր լիցի գատաստանի»:

Սպաքէն ասացաւ, Եթէ որ արձակիցէ զկին իւր-  
ապէ նմա զարձակմանն. բայց ես ասեմ ձեզ՝ Եթէ  
ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնը-  
կութեան՝ նա տաց նմա շնալ, և որ զարձակեալն  
առնէ՝ շնայ: Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջ-  
նոցն. Մի երգնուցուս սուտ.... Այլ ես ասեմ ձեզ,  
Ամենայն մի՛ երգնուր....»

աջ և ձախ այն վիչերն, որոնց մէջ կարող է  
ընկնել կին արձակողը:

Անբարոյականութեան պատճառով արձակու-  
րը պէտքէ հարկաւ հետեւի Քրիստոսի նախըն-  
թաց խօսքին. «Եթէ աջ ձեռն քո գայթակը-  
զեցուցանէ զքեզ, հատ զնա և ընկեա ի քէն».  
զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ,  
և մի՛ ամենայն մարմինդ քո արկանիցի ի գե-  
հեն»: Հասկանալի է, որ արձակողը պէտք է  
անկին մնայ՝ իբրև հատանող իւր մարմնի մի  
մասի: Այդ է որ շեշտուած է նաև Պօղոս  
առաքեալի թղթի մէջ. «ապա եթէ մեկնեսցի?  
անայր մնացէ կամ անդրէն ընդ առն իւ-  
րում հաշտեսցի»: Եւ կամ «մինչ կենդանի է  
այրն, շուն կոչի, եթէ լինիցի առն այլում...»  
Ուստի և Մարկոս աւետարանիչը ամփոփ և  
ուզգակի պատմումէ Քրիստոսի պատասխանը.  
«Եթէ այր արձակեսցէ զին իւր և արասցէ  
այլ շնայ: Եւ կին, եթէ ելցէ յառնէ իւրմէ  
և եղիցի առն այլում շնայ»:

Ք. Այժմ զիմենք նախնեաց մեկնութիւն-

ներին և տեսնենք թէ այդ ինչպէս էին հաս-  
կանում մեր ու հայրերը:

Անանիայ Սահացնեցին ասումէ Մատթէի  
գեղեցիկ մեկնութեան մէջ.

«Լուր զինչ ասէ. Մովսէս վասն խստասոր-  
տութեան ձերոյ հրամայեաց զայն, զի մի՛ ան-  
դէն ի տան մահս գործիցէք, այլ ի բաց հան-  
ջիք. և զի ոչ միայն վսպանութիւնն, այլ և  
զցառումն կարծէ, յայն սակս և զայսպիսի օ-  
րէնս դնէ. և վասն այնորիկ ստեպ զառաջին  
քանս օրինացն յիշէ, զի ցուցյէ թէ ոչ հա-  
կառակ ինչ, այլ յոյժ միաբան նոցին է, զի  
ոչ լուծանէ, այլ առաւել յուղութիւն ա-  
ծէ. և միշտ ընդ արս խօսի. «որ արձակէ,  
ասէ, զին իւր» թէպէտ և այլ ոչ առնէ,  
այնու իսկ արար զանձն պարտական, զի շնալ  
ետ կնոջ ի հանելն, և միւսն զայլոյ հանեալն  
առնլով եղեւ շնացող: Եւ զի մի ամենելին ի  
կնաշանն ձգիցէ զմնասն և ճոխանալով պատ-  
ճառս տացէ կնոջն և այնմ որ առնուն կա-  
միցի զինն, փակեաց զդուրս առ ի նմանէ.

զի ասելովն թէ «որ զարձակեալն առնէ շնայց» և կամիցի իսկ՝ զկինն ածէ ի զգաստութիւն, և յամենեցունց խնու զճանապարհս նորա, և զի ուսցի թէ ամենայն հարկաւորութեամբ այնմ ոք սկզբանէ բաժին առւաւ նմա՞ պարտէ նստել. և եթէ յայնմանէ վրիսկեացի, յայլմէ ումեքէ պատսպար մի գտցէ. զի ի հարկէ այնուշեաւն եղիցի՝ յանձն առնուլ իւրում ամուսնոյն հսկել: Ապա թէ ծանրագոյն ինչ զայս համարեածիր, միշեսծիր զառաջին բանսըն, որովք երանէ զլողան, և տեսծիր զի յոյէ դիւրին է և հնարաւոր, զի հեզն և խաղաղարին և խօնարհն սրախւ և ողորմածն զիարդի ի հաշտութիւն ածիցէ. զիարդ իցէ, զի ինքն ընդ իւրում կնոջն կագիցի. և ոչ այսու միայն, այլ և այլով ևս օրինակաւ ցուցանէ զօրէնս թեթեագոյնս: Եւ յայտ առնէ զպատճառս արձակելոյն և չարձակելոյն, ասելովն թէ «առանց բանի պոռնկութեան», ապա թէ ոչ՝ ի նոյն իսկ դառնալոց էր. զի թէ հրամայեալ էր թէպէտ ընդ բազումն լինիցի, սակայն ունիցի

ի տան և ոչ հանիցէ, այնպիսի իշխանութիւնն կործանէր զիրսն: Տեսանե՞ս զի՞արդ միաբանին յետին բակին ընդ առաջինսն: զի որ ոչն հայիցի յարատ ի կին ընկերին, յայտ է թէ ոչ պոռնկի. իսկ որ ոչն պոռնկի, ոչ տայ պատճառս այլում առն հանել զիւր կինն: Վասն այնորիկ մեծաւ զգուշութեամբ պարսպեալ պնդէ բազում երկիւզիւ ածել ի ճգունըս զայրն եթէ հանել կամիցի, եթէ պոռնկութեան կնոջն ինքն լիցի պատժապարտ. զի մը յորժամ լսիցես թէ իսկեալ և ընկեալ ի բաց զակն քո, զկնոջէն կարծիցես, թէ վասն դոյզըն ինչ իրաց պարտ իցէ արձակել յարէ ի նոյն ի դէպ ժամանակի և զառաջագոյն նորին ուղղութիւն, զի միով իրօք հրամայէ հանել և միւսովն չհրամայէ»<sup>1:</sup>

Յովհան ծործորեցին ասումէ նոյն աւետարանի մեկնութեան մէջ, որ շարունակութիւն է ս. Ս. Շնորշալու մեկնութեան:

«Այլն թէպէտ այլ կին ոչ առնուցու, սակայն պատժապարտ է, զի շնալ ետ կնոջն ի հանելն։ Իսկ թէ այլ ոք առնէ դհամեալ կինն՝ զանձն անփառնդ կարծեցեալը և զնա շնացող անուանէ, զի ոչ նորա է կինն՝ այլ որ եհանն։»

«Իսկ ասելովն թէ «առանց բանի պոռնկութեան», յայտ առնէ զպատճառ արձակելոյն և չարձակելոյն, զի թէ այս ոչ գուցէ ի միջի՝ անհնարին է տալ արձակումն։ Իսկ թէ լինիցի վկայութեամբ՝ արձակել արժան է. ընդէր. Նախ՝ զի ինքն զինքն ի սիրոյ առն իւրոյ բաժանեաց, և գործով հօմանիս իւր գուգեաց, վասնորոյ և բանիւ ևս բաժանել ի գէպ է, զի մի՛ որդիքն շնութեան դհայրենիս հարազատ որդւոցն ժառանգեացեն։

«Եւ երկրորդ՝ զի մի՛ նախանձեալ առն՝ վրէժս առնէ ի կնոջէն և ի սիրեխէն, զի «բուռն է նախանձ առնակնոջ» և ոչ հանգուրժէ յաւուր բարկութեան՝ ասաց իմաստունն։ Տես և զայս՝ թէ որպէս միաբանի այս ընդ առաջ-

նոյն զի որ ոչ հայի յարատ՝ ոչ շնայ, և որ ոչ շնայ՝ ոչ արձակէ զկին իւր լինել առն այլումն և թէ արձակէ՝ ոչ հրամայէ այլում լինել որչափ կենդանի է կինն, որպէս հրամայէ առաքեալ։»<sup>1</sup>

Իսկ զո՞ն թարսեղը գրումէ Մարկոսի մեկնութեան մէջ. «Զի այլն յորժամ լուր՝ թէ պատճառ պոռնկութեան կնոջն ինքն է, զդուշանայր հանել. և նա որ կամէր առնուլ՝ յորժամ գիտէր թէ պոռնկութիւն համարեալ է իւր՝ ոչ առնոյր։ Այլ և ինքն կինն յակամայ լուր ի լրութենէ, յորժամ գիտէր թէ ոչ ոք ընդունելոց է զնա։»<sup>2</sup>

Ահա և իգնատիոս վարդապետը Պուկասու<sup>3</sup> մեկնութեան մէջ. «Պատուէ զարձեալ և այնու զօրէնս, զի որ նովաւ կապեցան մարմինք՝ որոշումն արտաքոյ բնութեան շունս գործէ՝ յումի բաժանեցաւ և առ որում բնակեաց։»

1. Տպ. Կ. Պոլսի. Էջ 120, 122.

2. Գրչագիր. №. 1328.

3. Գրչագիր. №. 1331.

Իսկ ս. Գրիգոր Տաթևացին աւելի ևս կարձ  
և որոշ բացարումէ ասելով՝ «զօղքը դէմքն  
շունս կոչէ» այսն որ արձակեաց, և կինն, որ  
արձակեցաւ, և կինն որ էառ, և այսն որ զար-  
ձակեալն առնու՝ շունք եղեն. և բառաստան-  
շնացողացն է նոցա...: Վասն այնորիկ հրա-  
մայեաց Քրիստոս ամեննին ոչ բաժանել զիին  
յառնէ իւրմէ»:

### Դարձեալ.

«Մարդն որ եհան զիինն, պատճառ եղե  
շնութեան նորա: Եւ այն մարդն, որ էառ զնա,  
շուն կոչի: Եւ այս մարդս, թէ պյլ կին էառ,  
երկուքն շնացողք են: Այդպէս ի չորս դէմն  
շնութիւն եղեւ: Եւ թէ ասէ այն մարդն, թէ  
«նա հանէ՝ ես առի»: Ասեմք, թէ կին նորա  
է, թէպէտ ի տանէն եհան. զի ոչ հեռաւոր  
աւելն և ոչ ժամանակն ոչ կարէ քակտել  
զպսակն: Եւ դարձեալ թէ պատճառաւէ հա-  
նեալն՝ շնութիւն է քեզ. և թէ անպատճառ,  
կին նորա է և ոչ քեզ:»<sup>1</sup>

2. Գրչագիր.

Այլ և Յովհան Մանդակունին ասում է  
«Վասն կնաթողաց» թղթին մէջ. «Եւ ոչ ա-  
տելութեամբ ինչ հեռանալ հրամայէ. զի ա-  
մենայն, ասէ, որ ատէ զեղբայր իւր, մարդաս-  
պան է, իսկ որ զիինն իւր ատէ, անձնասպան»:<sup>1</sup>

Արդ՝ բաւական են այսքան վկայութիւննե-  
րը: Բոլորն էլ պնդում են մի և նոյն ճշմար-  
տութիւնն, ըստ որում և պարզ է Քրիստո-  
սի վարդապետածը: Կինը կամ ամուսինն ար-  
ձակել արգելումէ. արձակուածը պսակել  
ուրիշի հետ՝ անկարելի է, վասն զի այդպիսի  
ամուսնութիւնը շնութիւն է: Ուրեմն «այն որ  
զհոգի և զմարմին կապեաց ի մի՝ ոչ ոք իշ-  
խէ լուծանել. բայց Նա որ կապեացն՝ և  
Նա արձակեսցէ, և վերստին անլոյծ կապեա-  
ցէ»:<sup>2</sup> Վասնորոյ և «մի խաբիք, ոչ պոռնիկք,  
ոչ կռապարիշտք, ոչ շունք..... զարքայու-  
թիւն Աստուծոյ ոչ ժառանգեն.....»:<sup>3</sup>

1. Տպ. Վենետիկ. էջ. 130.

2. Ա. Գ. Տաթևացի, ամրան Քարոզք. էջ. 197.

3. Ա. Կորնթ. Զ. 10.



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՑ Ս. ԵԿԵՂԵՑՈՒ ՊՍԱ-  
ԿԱԴՐՈՒԹԻՒՆԲ:

Հայաստանեաց ս. Եկեղեցին հաստա-  
տուած է Քրիստոսի փրկարար վարդապե-  
տութեամբ, նորա խորհրդաւոր արարողու-  
թիւններն ևս պէտք է ծագեն անպատ-  
ճառ այդ վարդապետութեան սկզբունքներից:  
Պսակը ս. Խորհուրդ է և պսակադրութիւնը  
Խորհրդաւոր սրբագործումն, ուրեմն և նորա  
հիմունքը պէտք է սուրբ լինի. Եթէ պսակադ-  
րութեան արարողութիւնը հակասէ Աւե-  
ատրանին, եթէ արարողութեան սկզբունքին  
հակասէ գործնական վարդապետութիւնն, եր-  
կու գեպքումն էլ կլուծուի այդ ս. Խորհրդի  
նշանակութիւնն ու երջանկացուցիչ ներդր-  
ծութիւնը:

Արդ՝ պսակադրութեան միջոցին ասւումէ.  
«Վասն այսորիկ թողքէ այր զհայր իւր և զմայր իւր,  
և երթիցէ զհետ կնոջ իւրոյ. և եղիցին երկոքեան

ի մարմին մի: Արդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ  
մի մեկնեսցէ»:

Եւ աղօթւումէ. «Տէր Աստուած յաւիտենա-  
կան, որ զանզոյս և զնախորոշեալս զուգակցես միա-  
ւորութեամբ, և կապես անքակտելի ու որչնեա  
զծառայս և զաղախինս քո . . . .»:

Այնուհետեւ քահանան խոստովանեցնումէ  
նոցա, որպէս զի եթէ ունեն հաւատքի թու-  
լութիւն և այնպիսի մեղքեր, որոնք նոցա ան-  
ընդունակ են դարձնում այդ աստուածային  
օրչնութեան, զղան և խոստանան ապաշխա-  
րել և քաւել: Մասն քան պսակի թոյլուու-  
թիւնը քննումէն, որ արտաքին արգելքներ  
(Հասութիւն, անչափահասութիւն և այլն)  
շինին, իսկ այժմ վնասարեր կարող են լինել  
ներքին անուղղութիւններն, որոնք օտարաց-  
նումն հեռացնումէն մարդուն թէ Աստուա-  
ծանից և թէ Մորա ս. օրչնութիւնից: Մեր-  
քին վերքերը կարելի է միայն խոստովանու-  
թեամբ, պսակուղների կամեցողութեամբ և  
անձնուիրութեամբ բուժել, ուստի և քահա-  
նան դիմումէ նոցա, զարթեցնումէ նոցա

խիղճն և դրդում՝ զղջալ և մաքուր հողով  
ու սրտով մտնել սիրով կապուած այն օրհն-  
նութեան տակ, որ արժանաւորներին երջան-  
կացնումէ, իսկ անարժաններին՝ իբրև տկար  
անօթների՝ պայշթեցնում։ Այստեղ արդէն ա-  
պագայ բախտաւորութեան կամ անբախտու-  
թեան պատճառն ինքեանք պսակուղներն են։

Եետոյ քահանան դիմումէ դէպի նոցա ասե-  
լով. «Տեսէք որդեակք, աստուածային հրամանաւն և  
կաննիք ս. հայրապետացն եկեալ էք ի ս. եկեղե-  
ցիս պսակիլ օրինօք ի սուրբ ամուսնութիւն։ Աս-  
տուած զձեղ միաբան սիրով պահեսցէ, ի խոր ծե-  
րութիւն հասուցէ։ և անթառամ պսակին արժա-  
նացուցէ։ Ապա տեսէք, որ աշխարհիս վերայ պէս-  
պէս փորձութիւնք կան. թէ հիւանդութիւն, թէ  
աղքատութիւն, և թէ այլ ինչ նեղութիւն, Աս-  
տուած զձեղ յամենայն փորձութենէ հեռի պահես-  
ցէ։ Բայց Աստուծոյ հրամանն այս է, որ դուք եր-  
կոքեանդ մինչև ի մահ միմեանց օգնութիւն պար-  
տիք առնել»։

Այս խօսքերից յետոյ հարցնումէ ամուս-  
նացուներին՝ թէ արդեօք այդ բոլոր հանդա-  
մանքների մէջ համաձայն են իրար հետ սիւ-

րով ապրելու. ըստ որում և համաձայնութիւն  
լսելով, շարունակումէ։

«Այս բանիս վկայ Աստուած է՝ որ աներևութա-  
պէս ի վերայ ս. սեղանոյս բազմեալ է։ Այլ և մեր  
պահապան հրեշտակքն այս ս. եկեղեցիս, ս. խաչս  
և ս. Աւետարանս, գապք քահանայից և երամք ժոռ  
զովրդոց. սոքա ամենեքեան վկայ լինՔն մի»։

Եւ երբ համաձայնուումէն, քահանան օրհն-  
նումէ. «Աստուած ի մէջ սոցա, և սոքա մի'  
սասանեացին. օգնեացէ սոցա Աստուած . . .»։  
Որով և սկսումէ պահանելի օրհնութիւնը.  
պսակուողք պարտաւոր են ուշադրութեամբ  
վերասլանալ այդ գեղեցիկ օրհնութիւնների  
հետ դէպի Աստուած և հայցէլ՝ որ Սա-  
թագաւորէ իւրեանց մէջ։ Պիայն այդպէս  
կարող են անվիրով լսել.

«Ուրախ լե՞ր բերկրեան հարսնացեալ սուրբ  
եկեղեցի. պայծառացն զմանկունս քո յօրհն-  
նաբանութիւն ծագողին դշող լուսոյ ի քեզ,  
Պայր Եկեղեցի»։

Եւ կամ միտ առնել ս. Պաքի պատուիրան-  
ներն, որոնցով պարտաւոր են առաջնուրդուիլ,

ըստ որում՝ և կարդացւումեն այն բոլոր կը-  
տողներն, որոնց համաձայն պէտք է լինի ճըշ-  
մարիս Աստուածահանոյ պսակը, միշտ՝ «զոր  
Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեացէ», աս-  
տուածային խօսքի կրկնութեամբ, կամ մաղ-  
թելով. որ լինին «մի ճարմին, միասորը և հագու-  
հեղութեան, սիրել զմիմեանս պարկեշտ վարուք,  
ամրիծ հոգեւով, առանց ամօթոյ, առանց լրկ-  
տութեան պատրաստ լինել ի գործս բարիս»  
«սուրբ և անարատ միաշունչ և միախորհուրդ»:

Ահա թէ ինչ է բարեմաղթում Հայաս-  
տանեայց ս. Եկեղեցին, ուստի և Անանեայ  
Նարեկացին իրաւամբ ներբողումէ Եկեղեցին.  
«Դու ամուսնացելոցն յարդարիչ և պահպա-  
նակ պարկեշտութեան անրիծ և անխարդախս  
բարեկեցութեան և անարատ կենցաղավարու-  
թեան»<sup>1</sup>:

Հայոց ս. Եկեղեցին կապումէ այր և կնոջ  
մաքուր սիրոյ կապով միացնումէ և դնում  
նորա վրայ ս. խաչի կնիքը:



ԿԵԱՆՔԻ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆՔ ԵԽ ՀԱՅՈՑ  
ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ:

Եկեղեցին միշտ ձգտումէ իրականացնել իւր  
սկզբունքները կեանքի մէջ, որ ժողովուրդը  
մօտենայ օրբստօրէ Աստուծոյ արքայութեան  
տիպարին: Եւ որովհետեւ կեանքն իւր յառա-  
ջաղիմութեան մէջ է և գնումէ շարունակ  
դէպի բարելաւացումն՝ անշուշտ եկեղեցու գա-  
ղափարական սկզբունքների և վարդապետու-  
թեան փրկարարներգործութեամբ, համակա-  
լի է որ կլինին իրականութեան մէջ պակա-  
սութիւններ, որոնք եկեղեցին ձգտումէ հետ-  
ըզհետէ վերացնել: Այդ նպատակով ունի  
նա պսակի օրհնութեան անբաժան հիմունքը  
կազմող կրթող որոշ կանոններ. այդոնք Աւե-  
տարանի շաւզով արժանի են դարձնում ա-  
մուսնութիւնն աստուածային օրհնութեան:  
Աստ այնմ այդ օրհնութիւնը չեն կարող վա-  
յելել նոքա, որոնք զուրկ են Աւետարանից

բղխած այդ հիմունքներից և հակառակ են ընթանգում իւրեանց գործերով ս. Եկեղեցու պրեարք վարդապետութեան, չարքանանալով այդ օրհնութեան և աստուածային բարձրագոյն հեղինակութեան։<sup>1</sup> Հայաստանեայց ս. Եկեղեցին ևս չի կարող հակառակ գործել իւր դաւանանքին և վարդապետութեան և անար-

1. «Իսկ եթէ ոք . . . գիւտ ինչ մարմնաւոր և կամ հնարք մարդկային և կամ արուեստ երկրակենցաղ զսահմանեալ աւանդութիւնս առ ձեռակերտ Եկեղեցի վարկանիցի, և ոչ պարզե առաւել կենաց և ակնկալութիւն աստուածային և Հոգւոյն Սրբոյ յայտնեալ լուսանորոգ նախագրութիւն . . . և միանգամայն ասել՝ դուռն երկնից և քաղաք Աստուծոյ կենդանւոյ և մայր կենդանեաց ազատ ի պարտեաց և ճշգրիտ տեսակ կերպի երեակիս բանականի, իմանալին՝ խորհուրդ հոգւոյս, և շօշափելին՝ պատկեր մարմնոյս . . . , զայնպիսի ոչ խոստովանողսն մերժէ յերեսաց իւրոց Հայրն Ամենակալի ձեռն Բանին իւրոյ էակցի, բարձեալ ի նմանէ և զաւանդ շնորհի Հոգւոյն փառակցի, փակեսցէ զդուռն կենացս այս առագաստի յանդիման նորին»։

Ա. Գրիգոր Նարեկացի. Հե, 15:

ժաններին յարմարուել ապա թէ ոչ՝ կկորցնէ իւր կոչումն և իւր նշանակութիւնն և ինքն ըստ ինքեան կուծուի, իսկ ժողովուրդը կորըստեան կմատնութի՝ Աստուծոյ հակառակ ձանապարհի վրայ. Եկեղեցին փրկարան է, միայն եթէ նորա կարգ ու կանոններն անփոփոխ են և աստուածային, որպէս և են, ըստ որում և իրական կեանքը պէտք է հետզէտէ ենթարկուի նորա ներդործութեան և ըստ Քրիստոսին բարեփոխուի, որ երջանիկ լինի: Հետամուտ լինինք ուրեմն Հայոց Եկեղեցու այդ կանոններին:

Ա. Գրիգոր Լուսաւորչի անունով մնացած 30 կանոնների մեջ ասուած է. «Թէ ոք առևանդ արասցէ՝ պսակն անվաւեր լիցի, և պսակեալն ում կամիցի լիցի»։ Այնպէս որ բռնութեամբ զբուած պսակն ապօրինի է և մերժումէ: Իսկ յետոյ.

«Որ վասն պոռնկութեան արձակէ զիին իւր արձակեալ լիցի, բայց մի ամ սրբեսցի»։<sup>1</sup>

4. Այս կանոնի սկզբունքի նմանութիւնն արտայայտուած է և նիոյ—Կեսարիոյ (314-ին) ԺԱ. Կա-

Ուրեմն։ մի տարի սրբութելուց (ապաշխարելուց) յետոյ իրաւունք ունի այրն ամուսնանալ։ Այդ լրացնումէ և միւս կանոնը, «Եթէ ոք թողու զերկրօրդն և յառաջինն դարձի ի թողեալն, 7 ամ ընդ յանցանացն ապաշխարեսցէ, և երկու ընդ օրինօք»։ Այր որ զի՞ն իւր թողու ի պատճառս աստուածպաշտութեան, նզովեալ եղիցի ի կեանս և ի մահ»։

Փոքր ինչ յառաջ գնալով տեսնումենք որ Դո դարի երկրորդ կիսում Հայոց Եկեղեցին աշխատումէր մաքառել կնախող լինելու դէմ։ Փաւստոս Բիւզանդն ասումէ. «Եւ յաւուրսն Ներսիսի Հայրապետին ոչ ոք իշխէր ի նմանէ հանել կամ թողուլ իւր զամուսին յամենայն երկիրն Հայոց զոր միանդամ քօղով կամ պահաւ հարսանեացն օրչնութեամբ առեալ էր։ և ոչ այլ առնել միւսանդամ իշխէր ոք համարձակել»։

---

Նոնի մէջ . . . «բայց և ամ ապաշխարեսցէ, ի ձեռն ողորմութեան սրբեսցի և հաղորդեսցի օրինացն, Եթէ կամեսցի կին արասցէ, և կինն այլում առնչիշխէ լինել մինչ կենդանի է այր նորա»։

1. Տպ. Անետիկ. էջ. 229։

Արշակաւան աւազականոցի մասին ևս պատմելով ասում է. «Բազում վնասս առնեին և անդ անկանէին. բազում կանայք զարս թողուին և անդր անկանէին. բազում արբ զիւրեանց կանայսթողուին և այլոց կանայս առեալ անդր անկանէին . . . . .»։

Ուրեմն ամուսնաթողներն ուղղակի չարագործների թւումն էին և փախչումէին գողերի ապաստանարանը. «Սյնը կրկնումէ և Խորենացին. «աւանդառուք և պարտականք և ծարենացին. «աւանդառուք և պարտականք և ծարենացին. «այլք այսպիսիք փախուցեալք անդր անհանք, և ոչ կայր նոցա այց և խնդիր»։ 2

Ուրեմն արդէն Դո դարում երր հեթանոսական սովորութեանց յիշողութեան տակ էր ժողովուրդը, չարագործութիւն և աններելլի ոճիլ էր համարւում ամուսին թողնելն։

Մանելով Եւ դարը, տեսնումէնք որ ս. Պահակ հրամայումէ քաշանաներին. «Ուսուցէք

1. Անդ. էջ. 607։

2. Պատմութիւն. III, ԻԵ։

և զժողովրդականս յամենայն անառակութենէ ի փախչել . . . առեսցեն զշն ացողս, զգողս զպոնն ի կս, զաւազակս. ամենելին մի հաղորդեսցին և մի ասպնջական լինցին այնպիսեացն, զի մի եղիցին և ինքեանք ընդ նոսին որդիք կորստեան»:

Ուրեմն պոռնիկներն ու շնացողներն որոշումէին Եկեղեցուց:

Փոքր ինչ յետոյ Շահապիվանի սուրբ ժողովն ողբումէ ժամանակի խառնաշփոթ վիճակն ասելով. «Ի ցամաքել սիրոյն բազմանայր անօրէնութիւն . . . և լինէր յաճախումն Մծնէկից և այլոց չարեաց, կն ահանէ ից, պոռն կաց, դողաց, անճակամաց ամենայն խոտորնակ չարագործաց՝ յաշխարհիս Հայոց ի մէջ տանս Թորդոմայ»:

Աստ որում և ժողովն ամեն միջոցների է դիմում վերացնելու համար այդ չար սովորութիւնը: Նա կարգազուրի է անում այն հոգեորականին, որ խառնումէր պոռնիկական ախտի մէջ «և վկայութեամբ իլքն ի յայտ եկեսցեն . . .», մինչեւ որ ապաշխարութեամբ քաւէր: Խոկ «եթէ կնաւոր երէց գոցի ի պղծութեան և ի պոռնկութեան և յայլ գործս չարեաց, և ստուգեալ վկայիւք, քահանայութիւնն լուծցի, և

յեկեղեցւոյ բաժնէ հեռացեալ լիցի. Յ. դրամ տուգանս տացէ և ի կարօտեալս բաշխեսցեն»:

«Ապա եթէ կին երիցուն կամ սարկաւագին ի շնութեան գտցին' ընտրոց տէր նոքա լիցին. Կամ զեկեղեցին և զքահանայութիւնն ընտրեսցեն, կամ զկինն. Եթէ զքահանայութիւնն առցէ, զկինն ի տանէն ի բաց հանցեն, և ապաշխարութիւն իմաստ ի վերայ գիցեն»:

Ուրեմն քահանան կարող է իւր պոռնիկ կնոջ պահել, միայն թէ այն ժամանակ պարտաւոր է թողնել քահանայութիւնն և հարկի տակ մտնել: Խոկ ժողովրդականաց համար կանոնադրումէ. (Ք. կանոն)

«Եթէ ոք կին ունիցի, և պոռնկեսցի, և զկարգ ամուսնութեան սրբութեամբ ոչ պահեսցէ, և զպըսակն զոր առ ի ձեռն քահանային ի ս. եկեղեցւոջն ի գլուխ իւր ընկալաւ . . . և ապա առ ոտն եհար, և զօրհնութեամբ ամուսնութիւն զոր Աստուածետ նոցա՝ պղծութեան կոխան արար, ի շնութիւն անկաւ, և ի պոռնկութիւն, և ի հանգանակս արբեցութեան, զայնպիսին կշամքեսցեն գլխաւորքն դանիւք, և բանիւք օգտակարօք և յեկեղեցւոյ ի բաց մերժեսցեն, և տուգան կալցին յեկեղեցի, և ընդ կալ օտեալս բաշխեսցեն, փոխանակ զի անար-

գեաց զԵկեղեցին, և զպսակն օրհնութեան պըղ-  
ծեաց: Թէ ազատ է և գան չէ մարթ հարկանել՝  
ի տուգանն և յապաշխարութիւնն յաւելցին, Ա.  
դրամ կարօտելոց, Բ. տարիս յապաշխարութեան.  
զպիծութիւնն այլ մի ևս գործեսցէ. ապա մտցէ յե-  
կեղեցի և ընդ ընկերս խառնեսցի:

Պարձեալ. (Թ. կանոն) «Եթէ ոք զիին թող-  
ցէ զորդւոց մայր առանց բանի պոռնկութեան, և  
կամ թէ արատ ինչ չ'ը ի մարմնի չիցէ, այլ որ  
եթէ այրն շնաբարոյ իցէ, և այլում ակն եգեալ ի-  
ցէ, դատաստանս այս լիցի. զորդիս և զտուն և ըլ-  
կեանսն և զհողն և զջուրն և զամենայն ինչ բաժա-  
նեսցին հասարակաց, զկէւն կնոջն տացեն, և կնոջն  
եթէ կամք են այր ի տուն ածել՝ յինքն համար-  
ձակ անցէ, զբաժինն կալցին և զարքունի հարկն ողջ  
արացեն, և այրն որ եթող՝ Է. ամ ապաշխարեսցէ,  
և յեկեղեցի տուգան տացէ, թէ ազատ է Յ. դրամ  
թէ շինական՝ գանալի լիցի, և Ճ. դրամ յեկեղե-  
ցի տուգանեսցի, փոխանակ օրհնութեամք զամուս-  
նութիւնն խոտելոյ: Ապա եթէ մինչդեռ ի պայ-  
քարին և ի տուգանի իցեն, և կին ոք յանդգնեալ  
կնաթողին կին լինի, և ամ մի չիցէ անցեալ  
յայտ եղէ թէ զառաջին կինն նա ետ թողուլ՝ կալցին  
զկինն և յուրկանոց տացեն, տարի մի աղասցէ

գոտեացն, եթէ ազատ է, յուրկանոց չերթայ, Ճ.  
դրամ տացէ ի գոտիսն», \*

Այնանման սոսկալի պատիժների է ենթար-  
կում և ամուլ կին, արձակողին: Անդ սմին  
նախընթաց կանոնին պէտք է աւելացնենք և  
մի ուրիշն, որ է այս, (Յ. կանոն):

«Եթէ կին ոք յառնէ եղանիցէ՝ կալցին և անդրէն  
յայր իւր տացեն, մանաւանդ զոր վարձանք իցէ  
վարձեալ և ոչ բոզաբար թէպէտ և վաճառեսցէ  
թէպէտ ի յաղախնութիւն կալցի, եթէ կամք իցեն  
հոգեոր և բարի կրատու և սիրով կալցին, Ապա  
եթէ այրն չարաբարոյ իցէ, կամ պոռնիկ կամ  
հանդանակող և արբեցող, կամ այլ ինչ խեղական,  
գանիւ և խրատու կշտամբեսցեն զայրն, և հնազան-  
գեցուսցեն զերկոսին, եթէ ազատ է՝ տուգանք և  
խրատու զայրն ի կարգ ածցեն, ապա թէ դիւրա-  
փոխեսցի այրն, կինն պաշտեսցէ զնա»:

Այս կանոնները, մանաւանդ Թ. և Յ. որոնք  
հրամայում են, ամեն միջոցներով ուղղել ամու-  
սիններին, պարզապէս ցոյց են տալիս, որ Հա-  
յոց Եկեղեցու ս. Հայրերը մերժում են պսակի

\*. Տես. և Նիոյկեսարոյ ԺԲ. կանոնը:

“Աերսէս Բ.ի (546?—556) անունով ևս կան 43 հատ պատժական կանոններ, որոնց մէջ դառնումենք թէ անվաւեր պսակների յիշաւ տակութիւն և թէ հետեւեալ մի կանոնը»:

«Վասն այնոցիկ, որք զպոռնիկ կանայս թողուն, Ա. ամ ապաշխարեսցեն և կին արասցեն, և կինն առն չիշխէ լինել»: Իսկ յետոյ «Վասն որ զիւր կին թողու և այլ առնէ, և ապա դառնայ յառաջինն, Ե. ամ ապաշխարեսցէ»:

Այլ և «Վասն կնոջ որ ընդ արամբ է և շնայ, թէ թողցէ զպղծութիւն իւր» Ե. ամ առ դրանն Գ. ընդ օրինօք ապաշխարեսցէ»:

Այստեղից արդէն տեսնումենք, որ պոռնիկ կնոջ թողնողը պէտք է նախ ապաշխարի և ապա ամուսնանայ. իսկ եթէ շնացողն ուղղուի, գարձեալ պէտք ապաշխարութեամբ սրբէ իւր պղծութիւնը: Ոռաջին կէտը տեսնք և վերև:

Ապաշխարանքի վրայ խօսելով, յիշենք մի քանի ուրիշ կանոններ ևս: Ա. Գ. Լուսաւորչի վերոյիշեալ կանոնների մէջ կարդում ենք.

48  
լուծման կարելիութիւնը: Վերևի երկու կանոնների վերջում ևս ասուած է. «Որ զորդուց մայր թողցէ, կամ զամուլ առանց բանի պոռնկութեան կամ այլ արատոյ, առն և կնոջ պատուհաս տուգան և ապաշխարութիւն, կանոն և սահման՝ այդ կացցէ»: Ըստ որում ուղղել և միայն ուղղելն է ս. ժողովի սկզբունքը. դորա համար են դրուած բոլոր խստութիւններ և յարուցած դժուարութիւնները:

Բայց կայ պսակ, որ անվաւեր է համարւում: Ես կանոնը խօսելով առեւանդման վրայ, աւելացնում է. «Ապա եթէ երիցու ուրուք գաղտ պսակ եթեալ իցէ առանց հօր և մօր աղջկանն, երէցն զբահանայութիւնն չիշխէ պաշտել . . . . և պսակն զոր ետ՝ անվաւեր լիցի»:

ԺԲ. և ԺԳ. կանոններն անվաւեր են համարում և այն ամուսնութիւնն, որ հակառակ է չհասութեան կանոնին, որի մասին յետոյ պէտք է խօսենք: Այն կանոնը զրեթէ բոլոր կանոնադրութեանց մէջ կրկնում է, այնպէս որ դրուած արդելքների դէմ պսակադրութիւնը չի կարող ինքն ըստ ինքեան վաւերական համարութիւն:

Ժ. ամի ապաշխարութեան, ողորմութեամբ և արտասուզք արժանաւորեսցին խառնիլ՝ յեկեղեցի Աստուծոյ».

Հապա և երրորդ անգամ՝ ամուսնացողների համար, որ անբարեպաշտութիւն է համարւում կանոնուած է.

«Աասն որ ընդ երկու քեռց պունիի, և ապա զին կին առնէ, Ժ. ամ ապաշխարեսցէ»:

«Աասն որ յառաջ քան զհարսանիսն շնան և կին առնէ, Գ. ամ արտաքոյ, և Ա. ընդ օրինօք ապաշխարեսցէ»:

«Աասն որ շնայ և զնոյն կին առնէ, Գ. ամ ապաշխարեսցէ»:

«Զէ պարտ զկուսանս այրեաց ամուսնացուցանել, և ոչ զայրիս կուսանաց, զի աննման է»:

Յովհանն իմաստամերը կամոնադրումէ.

«Իսկ զերկեակսն նոյնպէս պարտ է ըստ առաջին կարգին՝ միջնորդօք և խօսնականօք հաւանեցուցանել յիրերաց յօժարութեամբ, և յեկեղեցւոյն և ի քահանայիցն օրհնութենէն ընդունել զնշան զուգաւորութեան իւրեանց. իսկ եթէ ոք ոչ այսպէս, այլ յառաջ խանձեսցին և պղծեսցին առ իրեարս, զայնպիսիսն ի բաց մեկնեսցեն ի միմեանց, և զշացելոյ զկանոն և զսահման ի վերայ դիցեն. Իսկ եթէ ոչ առնուցուն յանձն մեկնիլ ի միմեանց, յետ

\*. Հմմտ. և Նիշկեսարիոյ Թ. Ժ. Բարսղի Պ. կանոնները:

արդելուած է նաև կոյսի և այրու և երրորդ անգամ այրիացածների համար։<sup>1</sup> Այսանապէս արդելումէ անշափահասների ամուսնութիւնն, որպէս յիշումեն թէ ս. Աշհակի, թէ Անրսէս Բ-ի Իր (Իւնայ ս. Ժողովի) և Շնորհալու կանոններն, ըստ որում և իւրաքանչիւր պսակ պէտք է անպատճառ ամուսինների փոխադարձ համաձայնութեամբ կայանայ:

Լուծման վերաբերմամբ մի կանոն ևս կայ ամուսնի գերութեան (կամ աքսորանքի) պատճառով. այդ Անրսէս Գ. Շինողի լ. կանոնն է.

Այլ վասն մերոց մեղաց՝ յորժամ աշխարհս գերեցաւ ի թշնամեաց՝ բազում արք. և կանայք ի գերութեան էին. Նոցա ամուսինքն առանց վարդապետի հրամանի, կանայս առին, և արանց եղեն. Վասն այսպիսեացն սահմանեցաք այսպէս, թէ յառաջ քան զէ. ամն՝ մինչ զուգակիցն ի գերութեան էր, և նոքա յանդգնութեամբ այլ ամուսին՝ առին այնպիսեացն ամուսնութիւն ի պոռնկութիւնն է, և գան և պատուհաս կրեսցեն. յընչից և ստացուածոց

<sup>1</sup> Երրորդ պսակի արարողութիւն ևս չունի Հայոց Եկեղեցին:

Նոցա հրամայեցաք առնուլ վարդապետաց, և յաղքատըս բաշխել, և զնոսա զատուցանել ի միմեանց և ապաշխարել է. ամ: Իսկ է ամին եթէ ամուսինքն դարձեալ լինին ի գերութեանէն, անդրէն հրամայեցաք դառնալ յիւրաքանչիւր ամուսինս. ապա եթէ ոչ՝ կալցին զոր առինն, և նոքա որ դարձանն օրհնութեամբ այլ կանայս առնեն, և այլ արանց լինին, և կրկին ապաշխարութիւն ի վերայ դիցեն. Իսկ որ համբերեացն զէ. ամն առցէ օրհնութեամբ առանց տուգանաց և պատուհասի, և կրկին ապաշխարութիւն ի վերայ դիցեն.:

Աւրեմն լուծումէ և այն ամուսնութիւնն, որ պսակադրուելէ գերուած ամուսնուց յետոյ եօթը տարուանից առաջ: Իսկ եթէ Ժամանակը լրանալուց զինի պսակւումեն, պէտք է ապաշխարեն, որովհետև դործը դարձեալ ծանր է և անսիրութեան ապացոյց՝ քանի որ տարագրուած ամուսինը կենդանի է:

Ապօրինի պսակադրութեան անվաւերականութիւնն և արձակման վերաբերմամբ խիստ կանոնադրութիւնը ձանաշումէ և ս. Անրսէս Շնորհալին, որ զրումէ «առ քահանայս թըլթի մէջ. «Մի և կնաթողաց արանց, կամ այրաթո-

զաց կանանց՝ առանց կանոնական հրամանին՝ դիցէ  
ոք պսակ՝ զի մի լուծջիք գուք ի քահանայական  
կարգէ՝ ըստ կանոնաց, և եղեալ պսակն քակտես-  
ցի, և եթէ բռնանան, և ոչ բաժանին՝ լինք պոռ-  
նիկս համարեալ լիցին». որոնք Եկեղեցուց մերժ-  
ւումն:

Այլ և «Պահեսցէն և զհրամայեալ օրէնսն ի  
Տեառնէ՝ որ յաղագս առն և կնոջ անբաժանելի  
զուգաւորութեան. զի բաց ի բանէ պոռնկութեան  
և որ այլ ևս են ի կանոնս ս. Հարցն գրեալ պատ-  
ճառք՝ այլովք իւիք մի արասցէ բաժինս . . . զի  
թէ որ արձակէ զկին իւր և արասցէ այլ՝ շնայ՝ ըստ  
բանին Քրիստոսի, ապա և արձակեալն ընդ նմին  
զոր արձակեաց՝ շնութեան մեղքն պատժիցի»: \*

Ուարձեալ. «Մի ոք ի քահանայից ի բռնութենէ  
բռնաւորաց առանց կամաց առնն և կնոջն պսակ դի-  
ցէ . . . Զի պսակն այն անհաստատ է և լուծանելի,  
և պսակագիրքն ոչ առանց պատժոց»:

Վերջապէս յիշւումէ մի հանդամանք ևս,  
այն է՝ երբ մի ամուսինը հեթանոս է: Այդ  
մասին Պօղոս առաքեալն ասումէ. «Եթէ ոք  
եղբայր կին ունիցի անհաւատ, և նմա հաճոյ իցէ

\*. Ըստ էջ. 304:

ընակել ընդ նմա, մի թողցէ զնա: Եւ կին որ ու-  
նիցի զայր անհաւատ, և, նմա կամ իցէ ընակել  
ընդ նման մի թողցէ զայրն. Զի սուրբ է այրն ան-  
հաւատ կնաւն . . . Ապա եթէ անհաւատն մեկնես-  
ցի, մեկնեսցի, զի ոչինչ հարկ ի վերայ կայ եղ-  
բօրն կամ քեռն յայնպիսի իրս, քանզի ի խաղա-  
ղութիւն կոչեաց զմեզ Աստուած»:

Այս այն դէպքի մասին է, որում անհա-  
ւատ ամուսիններից մէկը քրիստոնեայ է դառ-  
նում. քրիստոնեան պարտաւոր է պահել քր-  
իստոնէական հրամանը, մինչդեռ հեթանոսը  
պարտաւոր չէ և եթէ թողնէ ամուսնուն,  
քրիստոնեայ կողմն ազատ է վերստին պսա-  
կուելու: Այդ կտորի բացատրութիւնը տալիս  
է Սարգիս Շնորհալին, <sup>2</sup> ասելով որ պատուի-

Ա. Կորնթ. Է, 12:

2. Մեկնութիւն կաթուղիկեայց. Կ. Պոլիս. 1826-  
էջ. 291. 292. Հռովմէական եկեղեցն բացէ ի բաց  
մերժումէ լուծելու հնարաւորութիւնն, այլ ճանա-  
չումէ միմիայն ժամանակաւոր բաժանումն: Մինչեւ  
անդամ եթէ մի ամուսինն այլաղաւան է և թող-  
նումէ հեռանում իւր կողակցից, վերջինիս իրա-

բուած է կանանց հնազանդ լինել «այլ և անհաւատիցն (արանց) և պագուտելոցն և ապստամբիցն ի բանէն ձշմարտութեան։ Եւ նմա կամ իցէ բնակել ընդ կնոջն քրիստոնէի, մի՛ թողցէ զնա՛ ըստ առաքելական խրատուն ..... այլ՝ բարեկարգութեամբ ընդ նմա կալով՝ համեստ գնացիկք շահել զնորա փրկութիւնն»։

Իսկ հեթանոսի հետ պսակուել արդելուած է Հայաստանեայց Եկեղեցու կանոնադրութեամբ։ Այդպէս Սերսէս Բ-ի Ժի. կանոնն ասումէ. «Ասմ որ զհեթանոս կին առնէ, կամ լինի առն՝ չար է. մանաւանդ եթէ յանհաւատութեան կան մնան. եթէ թողցէ կամ մեռցի անհաւատն, Ժ-ն. ամ ապաշխարեցէ, և զծնունդն ածիցէ ի հաւատս»։

Մանաւանդ Սիոնի ԺԱ. կանոնը. «Քահանայք պատուէր արասցեն՝ արանց և կանանց և դստերաց նոցա՝ զի ոչ արասցեն ընդ հեթանոսի զուգութիւն՝ զի չէ ամուսնութիւն, այլ անօրէն և պիղծ խառնակութիւն. զի զի՞նչ բաժին կայ հաւատացելոցն ընդ անհաւատին, զի չար է քան զշնութիւն և որ ունք չէ տալիս ամուսնանալու, քանի որ թողողը գեռ կենդանի է։

գարշակոյնն է քան զշնութիւն անբանական յանցանք»։

Ուրեմն հեթանոսի նաև այլակաւանի \* հետ հայի ամուսնութիւնն արգելուած է բացէ ի բաց, քանի որ սիրոյ և զգացմանց միութիւն չեն կարող ունենալ, և հաւատացող ըլինելով՝ չեն վայելիլ Հայոց եկեղեցու օրհնութիւնը։ Առանց հաւատքի՝ օրհնութիւնն

---

\*. Այլակաւանի հետ պսակուելն արգելուած է 491 թուի Վաղարշապատի ու Դւնայ ս. Ժողովների նզովքներով. Ուխտանէս. II, Էջ 80, 86, 136. Մովս. Կաղանկատուացի II, Խէ. Տես. և Յովհանն Իմաստասէրի Խթ. և ԼԲ. կանոնք։

։ 1823 թուին Վայմարի գուքսն իրաւունք տուաւ քրիստոնեաներին և Հրէից՝ իրար աղջիկ տալու. Գեօմէն լսելով սարսափել է և ասել, որ եթէ իւրեանց հոգեոր տեսչապետը բնաւորութիւն ունեցող մարդ լինէր, պէտք է այն րոպէին հրաժարուէր և չընդունէր այդ օրէնքը. զի եթէ անհաւատը մտնէ և հաւատացողի հետ շնորհ վայելէ, այլ ևս զգացմունք և բարոյականութիւն կմնայ ամենալաւ քրիստոնեայի մէջ անդամ։

ոչինչ է և սրբապղծութիւն է անհաւատի վրայ խորհուրդ կատարելը: <sup>1</sup>

Վերոյիշեալ բոլոր կանոնների սկզբունքները գեղեցկապէս ամփոփուած էն կոստանդին Առի ԺԵ. կանոնում որ է այս.

«Առաւել ջան տարցին եպիսկոպոսք և քորեպիսկոպոսք՝ զպոռնիկու զշնացողս և զհմայս և զամենայն յանցաւորսն՝ երկիւղիւ գեհենին ի դարձ ածել. իսկ զանդարձու մարմնաւոր պատուհասիւ և հոգեորաւ խրատել և տուգանել մանաւանդ զայն պիսիսն որ այր և կնոջ մէջ մացեն, կամ բող ունիցին կին, կամ ատելութեան պատճառաւ թողուն զկանայս առանց բանի պոռնկութեան. զայնպիսիս առանց խողչի անողորմ խրատեսցեն տուգանօք...»: <sup>2</sup>

Բոլոր ասածներից շատ պարզ երևումէ, որ Հայաստանեայց ս. Եկեղեցու սկզբունքն է՝ ամեն միջոցներ գործ դնել և ուղղել մեղաւոր կողակցին. ոչ մի պատճառ չի կարող քակտել օրինաւոր ամուսնութիւնը, բացի մահից: Միայն թէ պսակն անվաւեր է, երբ

1. Տես. Մատթ. Է, 6. Ըստհանր. էջ. 81—82:

2. Կիրակոս. ԻԱ:

ապօրինի է, երբ դրուած կանոններին հակառակ է:

Սակայն վերև տեսանք, որ կան ապաշխարանքով բաժանումներ. ուրեմն ո՞րն է ձշմարիտ եղակացութիւնը:



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՎՃԻԹՅՈՒ:

Ջանազան բազմակողմանի կանոնները համախմբուած դիտելով, տեսանք որ նոքա դիմումնեն գէպի Քրիստոսի վարդապետութեան իրադրութեամբ: Աւետարանն արգելումէ պսակի լուծումը, պսակադրութիւնն էլ անշարժելի կը նիք է զնում պսակի վրայ, այնպէս որ անհնարին է դոցա հակառակ գնալ, վասն զի եթէ Աւետարանի և պսակադրութեան որոշումը չպահպանուի, պսակի ս. խորհուրդն ևս կկորցնէ իւր բարձր նշանակութիւնն և ամուսնացողները զրկուելով ս. Եկեղեցու աստուածա-

յին օրհնութիւնից, չեն բողբոջիլ և ծաղկիլ:

Ուրեմն լուծումն այն ժամանակ է միայն իրականանում, երբ պսակադրութիւնը խառնուտ կամ անսուրբ հիմունքների վրայ լինելով, իրօք կատարուած չէ: Ապօրինի պսակը իսկապէս չէ կայանում և նորանով իրականացած ամուսնութիւնը հաւասար է պոռնը կութեան: վասն զի Հայաստանեայց ս. Եկեղեցու պսակադրութեան օրհնութիւնն նոցա վրայ է իրագործում և միայն նոցա համար է բարեբեր, որոնք պսակւումեն համաձայն նորա հրամաններին և դաւանումեն նորա հաւատքն ու բարոյական վարդապետութիւնը:

Արդ՝ Հայոց Եկեղեցում օրհնութիւնաբեր ճշմարիտ պսակ կլինի միմիայն նորա հաւատացողների վրայ, որոնցից թէ տղամարդն և թէ օրիորդը պէտք է կուսութեամբ պահած լինին ինքեանց, ճշմարիտ նպատակով իրար ջերմապէս սիրեն, հեռու՝ աղքակցական կապերից, աղատ՝ վարակիչ ախտելից, և մարմնական այլանդակութիւններից, և համոզմուն-

քով ու հաւատքով նուիրուին իրար, միանան հոգով՝ յաւիտեան չանջատուելու, միասին ապրելու և մեռնելու: Այս բոլորի պահպանութեան համար են դրուած նախայիշեալ կանոններն \*:, ըստ որում և քահանայացուն, որ անձամբ ըստ ամենայնի օրինակ պէտք է լինի ժողովրդին, ինքն իսկ չի կարող շեղուիլ դոյզն ինչ այդ կանոններից:

Եւ որպէս զի քահանան ճշդրիտ օրինակով ցոյց տայ թէ ինչպէս պէտք է լինել՝ Աստուծոյ ալքայութեան ճշմարիտ անդամը դառ-

\* Նշանաւոր է և Յովհան Խմաստասէրի մի կանոնն. «Ո. է արժան, յորժամ առ վաղիւ պսակ ընդունելոց են, յերեկորեն ժողովս առնել և արբենալ և զեղիսել. այլ պարկեշտութեամբ և աղօթիւք արժանի առնել զինքեանս պսակին օրհնութեան և աստուծածային հաղորդութեան: Ապա եթէ ոք գտցի զայս արարեալ քահանայն զօրն ի բաց փոխեսցէ, և որպէս ասացաքն՝ յայլում աւուր հըրաման տացէ զզուշութեամբ և արժանաւոր կարգօք նսակիլ և հաղորդիլ օրինացն»:

նալու համար, Հայոց Եկեղեցին նաև չէ թոյ-  
լատրում նորան կրկին ամուսնանալ կամ այ-  
րի լինել կամ այրի կնիկ ունենալ կամ ապօ-  
լինի ամուսնութեան ծնունդ լինել քանի որ  
այդ ամենը համաձայն չէ քրիստոնէական բար-  
ձրը սկզբունքներին: Աշմարիտ սէրն անսպառ-  
է և մշտական, և նորա հոգեոր կապն անխը-  
զելի է և անմոռանալի, ինչպէս երբեմն տես-  
նում ենք և կեանքում: Աշմարիտ մարդու ա-  
մուսնական սէրը մեռնումէ նորա կողակցի  
մահուամբ: Մինչդեռ երկրորդ ամուսնութիւ-  
նըն արդէն ապացոյց է առաջնի թիւրութեան  
և մարմնասիրական լինելուն, ըստ որում և  
երկրորդի անսրբութեան երաշխիք է առա-  
ջինը:

Սակայն «ոչ ամենեքեան բաւական են այդմ  
բանի», ուստի և Հայոց Եկեղեցին թոյլադրում  
է այրիներին իրար հետ պսակուիլ, միջոց  
տալով նոցա հետզհետէ ապաշխարելու իւ-  
րեանց մարմնասիրական ախտերն, վասն զի չէ  
ուզում որ կորստեան մատնուին ախտանալով,

այլ և չէ կամենում կոյսերին մատնել այրի-  
ների մեղքերին և սիրադրուժ սրտի հետ կա-  
պել: Վասնորոյ և երկրորդ ամուսնութեան  
սպայիշատակ պսակի աղօթքի մէջ խնդրում  
է Աստուածանից: «Թող Տէր, զմեղս և զյան-  
ցանս սոցա, զկամայ և զակամայ. ընկալ զա-  
զօթս և զինդրուածս սոցա. սրբեա զսցա  
զհողի և զմարմին. և շինեա զսոսա որպէս ա-  
ռաջին վարուքն կեալ ընդ միմեանս գործովք  
բարութեան յայսմ աշխարհիս»:

Այսպէս ուրեմն Հայոց Եկեղեցին ծանր կամ  
թեթև ապաշխարանքով ուղղումէ իւր տը-  
կար որդոց առաջնաքայլ շեղումներն, և նոցա  
միջոց է աալիս զղմամբ արժանանալու աս-  
տուածային շնորհաց. «զի (Աստուած) ոչ կա-  
մի զմահ մեղաւորին, այլ զդառնալն ի Քրիս-  
տոս»<sup>1</sup>, ըստ որում «արդարացուցանէ զմեղա-  
ւորս, որ ապաշխարեսցին»:<sup>2</sup>

1. Ս. Գ. Լուսաւորիչ. Յաճախ. էջ. 147.

2. Անդ. էջ. 175.

Թրող ոչ ոք չկարծէ թէ «չնչին» հանդամանքների վրայ ուշ դարձնել պէտք չէ. այն կանոնը կամ սկզբունքն, որ ամենից չնչին է համարւում մարդկապէս, կապ ունի ոչ միայն մարդու երջանկութեան, այլ և ամենահիմնական դաւանանքների և փրկագործութեան էական բովանդակութեան հետ։ Եւ եթէ փոքրը կարծուած մի սկզբունք խախտւումէ, խանդարւումէ և սրբագործութեան և Եկեղեցու օրհնութեան ընդունելութիւնը։ Սոյն իսկ մի կանոն է թէ «զի որ փոքր համարին զանցումն ինչ ի պատուիրանէն՝ այն է մահու չափ մեղք, որ ոչ ընդ խոստովանութեամբ անկանի....»։ Եւ կամ ըստ Յովհան Պանդակունու «Զի զոր ինչ և է ի վէրս մեղաց, և փոքր համարեսցի, և ոչ ապաշխարեսցէ, այն են մեղք մահու չափ»։ Պանաւանդ որ մեղք է ոչ թէ գործածն ինքն ըստ ինքեամն, այլ գործել կամենալը։ Ուրեմն եկեղեցական կարգաւորութեան մէջ ոչ մի սկզբունք և հիմնական կանոն չի կարելի չնչին և անհշան համարել, ա-

պա թէ ոչ՝ ամրողջ Եկեղեցու նշանակութիւնը կվասնգուի։

Ա. Գրիգոր Լուսաւորիչն ևս ասումէ իւր կանոնների վերջում. «Եւ արդ՝ զայս ամենայն զրեցաք առ ի փորձելոց զիւրաքանչիւր չափ ապաշխարութեան զի մի զոր կորուցուք յայսպիսեացն, այլ զարհուրեալ ի ծանր և յահագին և ի մեծ գատաստանէն յաւուր Տեառն մերոյ՝ ընկալցուք հանդերձ աղօթիւք և պատարագօք և յափշտակեսցուք զնուա յորոգայթից սատանայի, որպէս և զանձինս մեր կարասցուք զերծանել ի յաւիտենական տանջանացն Քրիստոսիւ Յիսուսիւ Տէրամբ մերով նմա փառք»։

Արդ՝ Հայոց Եկեղեցին յարմարաւոր ապաշխարանքով բուժումէ առաջնաքայլ մեղազործութեան վերքերը. բայց երբ որ այդ քայլը շատ յառաջ է զնում, կամ մարդ անուղղայէ մնում և կրկնում նոյնը՝ մեղքի մէջ իսպառ զառածելով, այն ժամանակ տեսնում է որ չունի նա սէր և հաւատք, կամ իսկապէս հոգով մեռած է, «սրտով թանձրացած» և ապաշխարութեան ու զզման անընդունակ։

Այդ ժամանակ նա վերջնական արգելք է դընում նորա ընթացքի դեմ և կամ զրկում է իւր շնորհներից, որպէս զի իւր միւս որդիք ազատուեն վարակման վտանգից և չարիքը չզարգանայ:

Եղրակացական այս ընդհանուր տեսութիւնից յետոյ, դնենք այստեղ խնդրի կանոնական վերջնական որոշումն, ամփոփելով մինչեւ այժմ վկայաբերուածները Հայաստանեայց և Եկեղեցու մի քաջակրոխտ վարդապետի խօսքելով:

«Թէպէտ և Խկեղեցի սուրբ, ասումէ ա. Գրիգոր Յաթեացին, կարէ բաժանել վասն արգելմանցը, զի բազում արգելմունք գոն պսակին, որպէս աղքակցութիւնն հոգեոր և մարմնաւոր, կամ տկարութիւն բնութեան, կամ պունկութիւնն, կամ այսահարութիւնն, կամ ծառայութիւնն, կամ բըռնութեամբն, կամ այլ ինչ այսպիսի պատճառ, որով բաժանին այրն և կինն, Այլ ոչ է պարու բուժութեամբ պատճառ, որ օրինաւ լինէ պարութեամբ ըստ այն «Առաջարկ պարութեաց»՝ մորդ մէ՛ մէնեցն»։ Սակայն ի մահն արձակի և քակի շաղկապն պսակին։ Եւ կրկին է

շաղկապ պսակին և կրկին է մահն, որ պատասխանի տայ նոցին այսպէս. զի է շաղկապ հոգեոր, այսինքն սրտիցն, և է՛ շաղկապ մարմնաւոր՝ խառնմամբ սեռիցն. Իսկ և մահն կրկին է, հոգեոր և մարմնաւոր, Հոգեոր մահուամբ արձակի հոգեոր շաղկապն. այն է՛ յորժամ մարդն մեռանի աշխարհի, մոտանելով ի կրօնաւորութիւն, Եւ մարմնաւոր շաղկապն արձակի և քակի մարմնաւոր մահուամբն. վասնորոյն ոչ է պարտ բաժանել զօրինաւոր պսակն, որքան կենդանի իցեն»։ \*

Էստ որում և «բազումք են պատճառ արձակելոյ. Նաև աղքակցութիւն հոգեոր կամ մարմնաւոր կամ օրինաւոր. Է. պոռնկութիւն. Է. տկարութիւն. Դ. բռնութեամբն Ե. ծառայութիւնն. Վ այսահարութիւնն. Է. անբժշկելի ցաւք որպէս գոգութիւն. Վ. թէ յառաջ պոռնկեալ իցեն ընդ միմեանս Բ. թէ ուլսաւոր լինի այրն կամ սարկաւագ կինն. Ճ. ան-

---

\* Գիրք Հարցմանց. Էջ. 610. Տես. և Գէորգ Պահ կոնդակը. «ի միտ առցեն քահանայք և ժողովուրդք, զի ամուսնութիւնն է առն և կնոջ ընկերակցական անվախճան միաւորութիւն ազատութեամբ և հաւանութեամբ երկոցունց եղեալ զոր միայն մահն կարէ լուծանել.» «Արարատ» 1875. Էջ. 309։

Հաւատութիւնն, թէ մինն անհաւատ լինի՝ ոչ պսակի և թէ պսակն բակեսցի. Ճ. թէ խօսեցեալ իցէ թէ նշանեալ, ոչ կարէ առնուլ աղգական նորին. Ճ. թէ ի կրօնաւորութիւն ինչ հրաւիրին այրն կամ կինն, այլ հաւանութեամբ միմեանց արձակեցան: Այսոքիկ են պատճառք արձակման: Եւ վասն այլ ինչ ոչ արձակի: :

Ուրեմն օրինաւոր ամուսնութեան պսակն անլուծանելի է, իսկ ապօրինին ինքն ըստ ինքեան լուծուած է, զի չէ կայացած իսկապէս: Որինաւոր պսակը միմիայն մահուամբ է լուծուած:

Եթէ դասաւորենք ապօրինութեան վերոյիշեալ պատճառներն երկու կարգի մէջ, կստանանք հետեւեալը.

### Անվաւերութեան պատճառներ.

1. Ազգակցութիւն կամ չհասութիւն.
2. Նշանադրական չհասութիւն.
3. Անբուժելի տկարութիւն (անկարողութիւն, որով մահացած է մէկը).
4. Բռնութեամբ կայացածը.
5. Պոռնկութիւն (=իրար հետ) պրսակից առաջ:

1 Մեկնութիւն Մատթէի. գրչագիր:

Ապաշշաբարութիւն եւ ապա  
օրինաւոր բայց ամուսնութեան առանձնութեան:

Արքայութիւն ամուսնութիւն թղթականութեան  
առաջնորդ ապաշտապահութեան նշութեան:

Մահուան դէպքեր:

1. 2. Ուխտաւորութիւն և կրօնաւորութիւն. (երկու ամուսինք կրօնաւորուում են).
3. Անհաւատութիւն.
4. Այսահարութիւն և անկարողութիւն (անբուժելի).
5. Անբուժելի գողութիւն) անմերձենալի
6. Անդարձ անշատումն.
7. Կրստական պոռնկութիւն: :

Առաջին հինգ պատճառների մէջ ուշադ-

1. «Հրամայէ Քրիստոս թէ «զոր Աստուած զուգեաց և միացոյց՝ մարդ մի մեկնեսցէ: Եւ որ զին իւր արձակէ՛ նա տայ նմա շնալ: Եւ թէ այլ մարդ զարձակեալն առնու՛ շնութիւն է նմա: Փակեաց թէ ամենեւին ոչ բաժանի օրհնեալ պսակն մինչ ի մահ: Զի որպէս քահանային օծումն ի հոգւոյն ոչ բաժանի յաւիտեան, և պսակին օրհնութիւնն՝ որ ի մարմինն է՝ ոչ բաժանի մինչ ի մահ ի մարմնոյն: Իսկ որ խտրոց գնէ թէ առանց բանի պոռնկութեան զայն ցուցանէ որ պատճառաւ իրիք կամ պոռնկութեամբ կամ այլ ինչ յորժամ բաժանին, առանց

րութեան առնելի է «պարտ հատուցանելու»<sup>1</sup> անկարողութիւնն, լինի այդ սեռական տկարութեամբ թէ անհամաշափութեամբ, որով չի կարող պսակը կայացած համարուել: Միւս դէպքերի մէջ, որոնցում պսակողը ձեռնհաս է իմանալ կամ դիտէ ապօրինութիւնն և պրսակումէ, խստիւ պէտք է պատժուի: Բոլոր հինգ պատճառների մասին խօսել ենք: Միայն կրկնումենք՝ քանի որ բանութեամբ եղածն, յետոյ յառաջացած անբուժելի այսահարութիւնն, անկարողութիւնն և գողութիւնը հակառակ մէկ ամուսնու կամաց են լինում: ուստի նորան արձակողը պարտաւոր է անպատճառ ապահովել նորա կեանքը նիւթապէս, ինչպէս տեսանք Յահապիվանի ս. ժողովի կա-

ամուսնութեան մնացեն թէ երկուքն են բաժանմանն պատճառ, մինչև հաշտեսցին: Եւ թէ մինն է պատճառ՝ որեկցէ թէ այրն և թէ կինն առանց ամուսնութեան մնացէ, և միւսն զուգեսցի այլոյ որ չէր պատճառ:» Հարցմանց գիրք. էջ 401:

1. Կորնթ. Է. 3:

նոններում: Իսկ չհասութեան մասին՝ յետոյ: Ամուսնութեան համար պսակը չի կարելի լուծել վասն զի պսակի նպատակը միմիայն որդութնութիւնը չէ. և երկրորդ՝ լուծելով կարելի է պատճառ լինել պոռնկութեան: Ա. Գ. Տաթևացին ևս գրումէ. «Զամուլ կինն ոչ է պարտ արձակել, Ասեմ թէ ոչ վասն Դ. պատճառի նաև զի ոչ դիտեն զպատճառս ամլութեան յառնէն թէ ի կնոջէն. երկրորդ՝ զի և Սառայ և Աննա ամուլ էր. երրորդ՝ զի ոչ իւր կամաւէ. չորրորդ՝ թէ պէտ զաւակ ոչ լինի, սակայն ի պոռնկութենէ խորշի»:

Երկրորդ կարգի մէջ՝ ուխտաւորութեամբ և կրօնաւորութեամբ նուիրւումէ մարդ (ուխտով կամ հրաւելով) Աստուծոյ և «մեռնումէ աշխարհի», միայն թէ այս պէտք է փոխադարձ համաձայնութեամբ լինի ըստ ս. Գրիգոր Լուսաւորչի օրինակին և պէտք է երկուքն էլ չեռանասն աշխարհից. այս բարձր առաքինութիւն է մարմնաւորի մահացմամբ, մինչդեռ անհաւատութիւնն ընդհակառակն՝ հոգեսոր կորուստ է մէկ կողակցի: Անբուժելի

այսահարութիւնն ու վարակիչ ցաւելն արդէն մարմնապէս անընդունակ և վտանգաւոր են դարձնում մարդուն իւր կողակցի համար, ըստ որում և մարմնապէս մեռնում է նա: Անդարձ անջատումն ինքն ըստ ինքեան ազատումէ կողակցին, իսկ եթէ դարձն անյայտ է՝ 7—10 տարի յետոյ է լինում ամուսնութեան թոյլտւութիւն: Ալերջապէս անուղղելի պոռնըկութիւնը կատարելապէս անհաւատութիւն է և հոգեոր մահ՝ ըստ այնմ թէ «Պատուական է ամուսնութիւն ամենեին և սուրբ անկողինք»: Բայց զշունս և զպոռնիկս դատի Աստուած»: <sup>1</sup> Այլ և «որ շնայ առ պակասութեան մտաց, կորուստ անձին իւրում ստանայ»: <sup>2</sup> և կամ: «որ պոռնիկն՝ յիւր մարմինն մեղանչէ»: <sup>3</sup>

Այս ամենի լուծիչ պարագան հոգեոր մա-

1. Երր. ԺԳ, 4:

2. Առակ. Զ, 32:

3. Ա. Կորնթ. Զ, 19:

հըն է. ըստ որում՝ «Որ յուսահատ են ի կենաց անտի և օտարացեալք յԱստուծոյ և յուղիով վարուց, նոքա են ստուգապէս մեռեալ»: Մինչդեռ հաւատացեալը չի կարող հոգով մեռնել կամ «մեռեալին» գործակից լինել:

Ուրեմն Քրիստոսի վարդապետութիւնից բղխած այն բոլոր արգելմունքներն, որոնք դրուած են Եկեղեցում պսակի սրբութիւնը պահպանելու, որով և ժողովրդի բարոյական ու կենսական երջանկութեան նպաստելու, անհնարին է խախտել դոցա դէմ դրուած պսակն իրապէս չէ կայանում: Իսկ մէկ ամուսնու ախտերն ու պարագայք (4, 5, 6, 7) որոնք մահացնում են նորան՝ վիրաւորում են և խզում պսակի կապերն միւս ամուսնու հայեցակէտովի որի հաւատքը թոյլէ և սէրն անկայուն. ուստի և չայոց Եկեղեցին ազատ է կացնում նորան այսինքն աղերսարկու «ար-

1. Յաճախ. Էջ. 132:

դար» ամուսնուն, որպէս զի ապաշխարելով և  
ուղղուելով մի նոր ամուսնութեան մէջ ճշմա-  
րիտ հաւատքով սիրող կողակից դառնայ:

Սակայն բարձր վարդապետութիւնը մնում  
է նոյն. առաքինի ամուսինն երբեք չպէտք է  
թողնէ իւր կողակցին. իսկ եթէ վերջինս կո-  
րած է, նա պէտք է ցմահ սգայ այդ կորուս-  
արն և վերատին չամուսնանայ: «Վապեալ ես  
ի կին, մի՛ իննդրեր արձակել. արձակեալ ես ի  
կնոջէ, մի՛ իննդրեր կին»:<sup>2</sup>

Մի վերջին խնդիր մնումէ մեզ որոշելու.  
արդեօք ովէ յիշեալ առանձնաշնորհումների  
իրաւատուն և կամ եկեղեցական արգելմանց  
հիմունքները կշռադատող և ըստ այնմ նոր  
հանգամանաց մէջ կարգադրութիւն անողը:

ՀՀ♦ ՇՆՈՐՀԱԶՈՒՐԿ ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ ՎՃԹԱ-  
ՑՈՒ ԻՐԱԿԱՏԵՐԸ.

Եթէ ուշադրութեամբ քնննոք Հայաստա-  
նեայց ս. Եկեղեցու հարուստ կանոնագրու-  
թիւնը, կտեսնենք որ գարերի ընթացքում  
դրուած կանոնները լրացնում են իրար,  
հաստատուելով առաքելոց և Հայոց ս.  
Հայրերի կանոնական սկզբանց վրայ: Սոր  
դրուած կանոններն առաւել որոշ են ար-  
տայայտում եղած կանոնը, կամ խստաց-  
նում են պատիժները կամ թեթևացնում  
և կամ չին կանոնական սկզբունքներից օգ-  
տուելով՝ նոր հանգամանքների համար կանոններ  
կազմում: Միայն թէ այդ բոլոր կանոնագրու-  
թիւնների մէջ անփոփոխ պահում են Հայաս-  
տանեայց ս. Եկեղեցու գաւանսկան և բարո-  
յական գարգապետութիւնն: Այլապէս չի է  
կարող լինել որովհետեւ Եկեղեցին հիմուստծ-  
է աստուածային հիմունքների և կամ Աւե-

տարանի վրայ, իսկ նորա առաջնորդողն է միշտ  
մի և նոյն սուրբ Հոգին:

Այսպէս մեզնից վեց դար առաջ գրումէ  
կոստանդին Ա. կաթուղիկոսն իւր մի կանո-  
նական կոնդակի մէջ. «Հրաման է այս առաքելա-  
հիր, որ ի տարւոջն երեք անգամ առաջնորդք Եկե-  
ղեցւոյ ժողովով տեսանեն զկարգս Եկեղեցւոյ, թէ  
“՞րու՞ ու՞նչի՞ զսահանս յա-իրենական”՝ ըստ Հոգին Յա-  
հասորաբեաց, զուտիան լուս-ւ և զէկամուտ ուստի իւլւ . . .»: \*

Միօն կաթուղիկոսը շեշտումէ, որ ինքը  
պարտաւոր է վերահասու լինել «քննել տեսա-  
նել զկարգս Եկեղեցւոյ, զոր կանոնեցին ս. Հարքն,  
թէ որպէս ունիցին առաջնորդք կամ ժողովուրդք  
Եկեղեցւոյ»: Ընդ նմին և ժողով արաւ հասորաբեալ լո-  
ւանդեալ օրինարդունիւն . . . Հարցն, իսկ զմերին լուս-  
բարեպաշտութեամբ ի նոյն կանոն միաբանել . . .»:

Սերսէս Շինողի Դւնայ ժողովը կամենալով  
մի կանոն դնել որ անժառանգ հոգեւորակաւ-  
նաց կայքն Եկեղեցունն է, չգիտէր թէ ինչ  
կանոն էին ունեցել ս. Հայրելն այդ նկատ-  
մամբ, ուստի և վախենումէին թէ մի գուցէ

\* Կիրակոս ԽԱ.

Հակառակ ընթանան նոցա, ենթարկուելով  
մարդկային մոլորութեան: Եւ ահա գրումեն  
իբր ծանօթութիւն. «Արդ՝ այս սահմանագրու-  
թիւն Եկեղեցւոյ՝ ի Եկեղեցի Հոռոմոց թագաւորէ,  
և ի Խորովայ Պարսից արքայէ աւուրցն և այսր ե-  
ղիցի. իսկ ինչ որ յառաջ քան զնոցա ժամանակն  
գործեցեալ էր՝ մի շարժեսցի, զի չգիտեմք ինչ  
հաստատուն, թէ որպէս կալեալ . . .»:

Այսն իսկ Կահապիվանի սւ ժողովը փոքր ինչ  
ծանրացնելով պատիմներն, ասումէ. «ապա թէ  
ոք ընդգէմ եկեալ ասիցէ թէ՝ ի Նիկիական կանոն-  
ուն ընդգէր ոչ է այնպէս ծանր եգեալ. վասն զի ոչ  
ունէր ոք ակն թէ այգափսի մեծամեծ չարիք և  
ոճիւք յաշխարհի գործիցին, այլ անդէն վաղվաշա-  
կի մօտակտուր կողէին (զազգախառնութեան) զչար  
արմատ կորստեան»:

Հայոց ս. Հայրերի այդ մեծ ժողովն չէ ու-  
ղում դոյզն ինչ շեղուել նախորդներից և  
հաստատումէ «զկարգն Ա. Գրիգորի և զԵկե-  
սիսի և զԱհակայ և զՄաշտոցի . . .»:

Առ այժմ չբազմացնենք այդ ակներեւ սկրզ-  
բունքի ապացոյցները. նախընթացում տե-  
սանք և ս. Գ. Սարեկացու վկայութիւնները՝

թէ Եկեղեցու կարգ ու կանոններն անփոփու-  
խելի են \*, և այդ բաւական է:

Հայաստանեայց ս. Եկեղեցու կանոնները  
դմումէ այն անձն՝ իւր աթոռակիցների խոր-  
հրդաժումիւնք լսելով, որ վայելումէ ս. Հո-  
գու բոլոր շնորհներն իրուե առաքելական յա-

\* Ապա «Եթէ ի փոփոխիլն ձեր ի տեղեաց՝ փոփո-  
խիցէք և զհաւատ. ի յայլայլիլն ձեզ հանգերձիւ՝  
այլայլիցէք և զհայրենի գաւանութիւն և զկրօն ի  
յուսանիլն ձեր զայլ և այլ լեզուս ուսանիցիք և  
զայլ և այլ աղանգս. ի բաժանիլն ձեր մարմնով ի  
սեպուհ երկրէ և յօտարանավն ի Հայրենեաց. և  
ի մտանելն ձեր յօտար ազգս և յօտար լեզուս նաև  
բաժանիցիք և օտարանայցէք մտօք և որտիւք ի նախ-  
նեաց ձերոց կանոնաց և առանգութեանց. ի հայրե-  
նեաց ձերոց սովորութեանց և բարուց. և մոռանայ-  
ցէք զհոգեոր և զմարմնաւոր ծնողս և զերախտաւորս  
ձեր. զեկեղեցիս և զհայրենաւանք ու խտն ձեր. ան-  
կարծիք և ձեզ է պատահելոց՝ որ պատահեցաւ Խորա-  
յէլացոցն. որք տապատ անկան յանապատի անդ՝  
ըստ ս. Պողոսի». Սիմէօն Կաթուղիկոս Պարտավճար.  
ջէ 295.

Չորդ: Այդ անձն է ամենայն Հայոց Կաթու-  
ղիկոսն, Թաղէսս և Բարդուղիմէսսի Լուսա-  
ւորչեան Ամոռի գահակալը. նորա իրաւունք-  
ները սահմանափակւումեն միմիայն Հայոց Ե-  
կեղեցու վարդապետութեամբ և ս. Լուսաւոր-  
չի առաքելական շաւղի աւանդականութեամբ:  
Ինչպէս որ ժողով կազմողը Կաթուղիկոսն է,  
կանոններ հրատարակող, հրամանավրող և հրս-  
կողը գարձեալ Կաթուղիկոսն է, այնպէս և  
Կաթուղիկոսն է Եկեղեցու բարձրագոյն վար-  
դապետն, ուրեմն և իւրաքանչիւր կանոնի բա-  
ցարող և իրականացնողն, երաշխաւորող և  
յանձնարարողը:

Որ ասումէնք թէ ժողովականք խորհրդա-  
կիցներ են, այդով չենք ուղում ասել թէ  
խորհուրդ տուղներ են, այլ նոքա խորհելով  
և քննելով՝ յայտնումեն իւրեանց կարծիք-  
ներն ըստ իւրեանց թեմերի հանգամանաց,  
որպէս զի Կաթուղիկոսը մարդկապէս նախա-  
պատրաստուի Ա. Հոգու թելաղըութեան լսե-  
լու համար: Առ այժմ չերկարենք. մեզ հա-

մար որոշ է այս, որ կաթուղիկոսով է կանոնադրւում կաթուղիկոսն է կանոնները հըրատարակում կաթուղիկոսն է մէկնում՝ իբրև բարձրագոյն վարդապետ, վերջապէս ուրեմն կաթուղիկոսը պէտք է գտնէ ուրիշ հանգամանքներում դրուած կանոնի համաձայնութիւնը նոր հանգամանքների մէջ, քանի որ այդ ևս բարձր վարդապետութեան գործ է։ Մի խօսքով «կաթուղիկոսն դէտ և զլուխ և օրէնըսդիր միցի ժողովրդեանն, ի զըստ բերանոյ նորա վճարեսցի ամենայն ինչ, որպէս Մովսէսին և Ահարոնին էր»։ ասում է առաքելական կանոնը։ Այդ է պատճառն, որ հին ժամանակի կանոնները յայտնի են մեզ միայն կաթուղիկոսաց անուամբ, քանի որ կանոնադրութեան գործի մեծագոյն բեռն ու պատասխանատուութիւնը միայն կաթուղիկոսի վրայ է։

Եթէ դարձնենք մեր խօսքը բացառապէս պսակի վրայ, կտեսնենք որ այդոր բնաւորական և բարոյական հանգամանքներն անթուե-

լի են որքան շատ կանոններ գրուին, դարձեալ նոր հանգամանքներ կենեն, ուրեմն կաթուղիկոսն իբրև բարձրագոյն վարդապետ, իբրև օծեալ քահանայապետ, իբրև օրէնսդրութեան իրաւատէր, և իբրև բազմաց ձայներ ու կարծիքներ լսող ու Ս. Հոգով վճռահատող, նա միայն կարող է իւրաքանչիւր գէպքի մասին նոր վճիռ տալ համաձայն Եկեղեցու կանոնադրութեան սկզբանց և ուղղիչ բացառութիւնք անել<sup>1</sup>։ Այս միայն կարող է

\*.\*. Որովհետեւ Եկեղեցին կրթող և փրկագործող է ամենատեսակ բնաւորութեամբ մարդկանց, ուստի անկարելի է իւրաքանչիւր պարագայի համար կանոն դնել։ Հռովմ. Եկեղեցին, որ բծախնդրութեան հասցրած կանոններ ունի գարձեալ չէ կարողանում գոցանով բաւականանալ, նորերս Բրեւլավի իշխան եպիսկոպոս Կոպն իսկ մէկ շրջաբերականով ասում է, որ պէտք է ամուսինների գիտակցութիւնը պարտիքըն ու խիղճը կրթել և պսակի գերբնական խորհրդի տակ խոնարհեցնել և ոչ թէ քաղաքական օրէնքների ենթարկել։

1. Ս. Սինոդի, առաջնորդների և յաջորդնե-

Ո. Հոգու շնորհով կշռադատել թէ արդեօք  
այս ու այն վարդապետական այսինքն՝ դաւա-  
նական ու բարոյական՝ հիմունքներն, որոնց  
վրայ հաստատուած են պատկի արդեմունքնե-  
րըն, չեն շօշափւում, և ըստ այնմ կարդադ-  
րել պատմել կամ ապաշխարել տալով նե-  
րել ապօրինին լուծել և կամ կարեռը դէպ-  
քում ապաշխարանքի տակ դնելով վաւերացնել:  
Երկրորդ. իւրաքանչիւր ապօրինութեան  
կամ մահուան լուծումն կապ ունի Եկեղեցու  
հիմնական սկզբունքների և դաւանանքների  
հետ. այլ և նոր հանգամանքներն, որոնք կա-

րի իրաւունքներն ու պարտիքները սահմանուած են  
Գէորգ. Դ. Կաթողիկոսի գեղեցիկ կոնդակաց մէջ.  
տես. «Արարատ» 1875. էջ 507—312. նա ասումէ  
որ ջանք է գործ գնումը «ըստ սրբազն պարտուց  
Հայրապետական պաշտամանս մերոյ՝ հաւատարիմ  
աւանդապահ լինել սրբազն կարդաց և կանոնաց  
Հայաստանեացս Ռւղդափառ ոուրբ Եկեղեցւոյ . . .»:  
էջ 308. Տես. և միւս կոնդակն «Հրահանգ վասն  
աւագ քահանայից» «Արարատ» 1882. էջ. 88.

լողեն առերեւոյթ համապատասխանել կանո-  
նին, կարեն շօշափել Եկեղեցու հիմունքն: Եւ  
որովհէետեւ բոլոր կարդապլութեանց մէջ կա-  
թուղիկոսն է առաքելական յաջորդականու-  
թեամբ հսկողն, որ չինի թէ այդպիսի մի վր-  
տանգ պատահի, ուստի և նա է պատասխա-  
նատու և նա պէտք է կարդապրէ: Հարկաւ նա  
կարողէ աալ կոնդակով որ և իցէ իրաւունք  
ո. Ոինորդին կամ առաջնորդներին, սակայն  
միմիայն իւր երաշխաւ որութեամբ և պատա-

«Աւագ քահանայն պարտի զգոյշ լինել՝ զի մի  
չհաս և ապօրինի պասկ գիցեն քահանայք եկեղեց-  
ւոյ իւրոյ, ի նկատել զապօրինութիւն ինչ՝ իսկոյն  
պարտի արգելու և անյապաղ գրութեամբ յայտնել  
Առաջնորդին և թեմական Ատենին»:

«Աւագ քահանայն պարտ է զգոյշ լինել՝ մի բնաւ  
պսակ գնել եկեղեց յայլոց ծխոց, խստիւ սրգե-  
լեալ է նաև յայնպիսի գէպս, յորս մին յեկեղեց  
յամուսնութիւն՝ իցէ ի տեղական ժողովրդենէ և  
միւսն՝ յօտար քաղաքէ կամ ի զիւղէ, պարտի ան-  
պատճառ վաւերական վկայականս պահանջել յօտա-  
րականէն՝ հաստատեալ յԱռաջնորդէ վիճակին օտա-

Խանատութեամբ. իսկ մի այլ կաթուղիկոս, եթէ այդ պատասխանատութիւնը յանձն չաւնէ, կարէ յետ առնել: Անշուշտ իրաւունք տալը միայն ծանր դէպքերումն է ներելի, որպէս կաթուղիկոսի երկարատև հիւանդութեան ժամանակ:

Երրորդ. մէկին ընտ մշտ հոգեպէս մեռած ձանաշել կարող է միայն Եկեղեցու այն քահանայապեան, որ ունի վարդապետական և

---

ըականի, յոր վիճակաց և իցէ թէ ի Ռուսաստանէ, թէ ի տաճկաստանէ, թէ ի Պարսկաստանէ և յայլոց տեղեաց, ուղղակի գրել առ Առաջնորդն նոյն վիճակի և տեղեկութիւնս պահանջել ստորագրութեամբ Առաջնորդի իւրոյ քահանայի և համաքաղաքացւոց, մի՛ իշխեսցեն պսակ գնել քահանայք, մինչև ստուսցին զյիշեալ վաերական վկայականս ստորագրութեամբ քահանայի իւրոյ համաքաղաքացւոյ և ազգակցաց օտարականին՝ հաստատեալ յԱռաջնորդէ վիճակին: Այսպիսի վկայական պահանջի նաև ի պատանեկութենէ անտի պանդխտեալ յօտարականէն, զի մի՛ գուցէ արդէն ամուսնացեալ լիցի օտարականն և ամուսինն կենդանի լիցի:

առաքելական լիառատ շնորհ և որի առաջ խոնարհումէ ազգն իրեւ ամբողջութիւն. մանաւանդ որ այդ մեծ պատասխանատութեան տակ է:

Չորրորդ. եթէ սոսկ իրաւաբանական գարձնենք պսակի խնդիրներն, այդ հակս ուակ կիրի Աւետարանին և կանոններով անպարփակելիի: Վասն զի Աւետարանը իսկապէս չէ ձանաչում պսակի լուծումն, և ըստ այդմ Հայոց Եկեղեցին իւր կանոնական շաւզում աշխատումէ կրթել ժողովուրդն, հասունցնել այդ բարձրութեան համար և ներողամնական հնարներով ազատել մոլորուած որդոց վերջնական կորստից: Իսկ վրկագործական այս մեծ զործի տեսուշն և զեկավարը կաթուղիկոսն է, իբրեւ առաքելաշնորհ անսպառ հեղինակութիւն կարգադրութեանց \*:

\* . Միջին գարերում՝ երբ Հռովմայ պապերը ձըգտում էին օգտուել Հայոց քաղաքական կարօտութիւնից և գերիշխանութիւն ձեռք բերել Կաթուղիկոսի վրայ, պահանջում էին որ Կաթուղիկոսն պը-

Վերջապէս առ հասարակ թէ ապօրինութեան և թէ մահուան պատճառով պսակի լուծումը կարող է որ և իցէ հանդամանքով եղծումն լինել ս. խորհրդի նշանակութեան և Քրիստոսի վարդապետութեան, իսկ դորանով կէտապարտուի Կաթուղիկոսն, ուստի ում վրայ ընկնումէ մեծագոյն պարտիքը, նորանն է և իրաւունքը:

Վճռի լրութեան համար Կաթուղիկոսը պէտք ունի մանրամասն քննել հանդամանքներն և մի առ մի արձանագրել տալու. այդ անողն է ս. Այնողն, որ և պէտք է իւր խորհրդածութեան արդիւնքն որոշէ կամ սահմանէ (օսլ եճլիտէ, միթինէ ուղարկիտէ) և ներկայացնէ Կաթուղիկոսին: Կաթուղիկոսը վերստին քննելով այդ բոլորը, կտայ իւր վերջնական վճիռը Հայրապետական կոնդակով կամ

---

սակի վերաբերեալ Հայրապետական իրաւասութեան այստեսակ վճրոներն ու շնորհումները չուր և թողնէր նորան: Այս ի հարկէ մերժուեց: Բայց այդ մասին ուրիշ տեղ:

Հաստատական հրամանով: Այդ տեսակ քննութեանց համար անհրաժեշտ են անշուշտ մի քանի տարիներ: անքուժելի հիւանդութեան կամ անկարողութեան վկայականը պէտք է հաստատուած լինի կովկասի բժշկական բաժնի (վրաչենու օգնութեամբ): Լուծման իրաւունք խնդրողը պէտք է լինի անպատճառ «արդար» և ոչ թէ մեղաւոր ամուսինը: Մեծ ուշադրութիւն պէտք է գարձնել ի հարկէ, որ զորօր: անկարողութիւնը կամովին յառաջացրած կամ լուծման այլ պատճառները չար նպատակով չլինին առթած: Քննութեան ամբողջ ընթացքում Հայոց ս. Եկեղեցին պէտք է գործագրէ իւր դաստիարակչական բոլոր միջոցներն և ապա թէ վճիռ տայ՝ ապաշխարանք նշանակելով:

Գերմանիան տարբեր դաւանութեանց պատկանող ամուսիններին ընդհանուր դատաստանի ենթարկելու համար, ստիպուած մի հակաեկեղեցական քայլ արաւ և սեփականեց կանոնական գործը: Դորանից յառաջա-

ցան ծանր հետեւանքներ, որոնց դէմ զրումէ :  
 մի նշանաւոր աստուածաբան։ «Կան նաև այն-  
 պիսի կապակցութիւններ, որոնց սրբագործումը պի-  
 տութեան և եկեղեցու կողմից, անբարոյական պէտք  
 է կոչել։ Պորանով փչացնումնեն ժողովրդի մէջ տի-  
 րող բարոյական գիտակցութիւնը, մինչդեռ այդ  
 կպահպանէին և կամրացնէին՝ լրջութեամբ պահելով  
 բարոյական հայեցակետերը։ Օրէնքը չի կարող բա-  
 ւագէս լրանալ այդպիսի իրերի համար, զի անհատա-  
 կան բնաւորութիւն կայ պատահող յարաբերու-  
 թեանց մէջ և հազուագիւտ գէպքերի պատճառով,  
 որոնք անհնար է որոշ կանոնների մէջ գնել . . . .  
 Օրէնսդրութիւնը սակայն պարտաւոր է իւր ունե-  
 ցած բոլոր միջոցները գործ գնել և ձգտել ճշգիւ-  
 պահպանելու պատկի սրբութիւնը Քրիստոնի հոգով։  
 «Հիմնուելով մարդկանց խստասրտութեան վրայ՝ ա-  
 սումնեն՝ թէ գորան են տեղի տալիս և առանձնա-  
 շնորհումն անում; սակայն ամենաթեթևամիտ և  
 անաստուած մարդկանց ամենաթեթևամիտ առանձնա-  
 շնորհումներ են տալիս և ձանաչում իբր հիմք լուծ-  
 ման զոր. փոխադարձ կամայական համաձայնու-  
 թիւն, ոչ յանցանքով վաստակած անբախտութիւն  
 և լ . . . .»; \*

\*. «1857-ից ի վեր, երբ ամուսնանալու նման օ-

Աա պահանջումէ որ այդ եկեղեցական ի-  
 րաւունքն եկեղեցուն դարձնեն, թէև իւրեանց  
 եկեղեցին սեփական իրաւունք չունի:

Արդ՝ հասկանալի է եկեղեցու դերն, որ ե-  
 թէ ծառայեցնեն մարդկանց քմահաճութեանց  
 և ժամանակի հանգամանաց, նոր կանոններ նո-  
 րա գլխին կապելով, այն ժամանակ կանոնա-  
 դըրութեան եկեղեցականութիւն, արարողու-  
 թիւն և Աւետարան կվերափոխուին։ Բայց այդ  
 կպահանջէ նա, որ Եկեղեցուն նայումէ իբր  
 մի գործիքի վրայ, իբր ժամանակա-որ պիտոյք-  
 ների ծառայող մարդկային հաստատութեան  
 վրայ։ Այդպէս մտածող եղել են միշտ, սա-  
 կայն հայոց Եկեղեցին գոյութիւն ունի 16  
 դարեր և Ճշմարիտ հաւատացողների համար է,  
 որոնք նորա մէջ հոգեւոր փրկութիւն են ինդը-

ըէնքը ընդունուեցաւ Անդլիայում։ ամուսնական  
 կեանքի մէջ բարոյականն ողբալի կերպով ընկած է  
 բարձր գասակարգի մէջ, և ընտանեկան գաղթակա-  
 նութիւնները շացել են։ ասում է Գլադստոնը։

րում, վերածնւում, լուսաւորւում, և երջանկութիւն դժնում:

Երբ Կ.Պոլսի «Օրագիր» թերթն ամուսնական խնդիրներ յարուցանելով՝ այս սկզբանց դէմ տղիտաբար զառանցումէր, «Ախօն» ամսագիրը շեշտումէր. (1873. էջ. 115). «Օրագիր», տղիտութեան, չասեմք գայլթակղութեան, խիստ ցաւալի օրինակ կընծայէ գրական աշխարհին, երբ ամուսնական կենաց շրջանին մէջ պատահած զեղծումներն Եկեղեցւոյն կվերագրէ և կկարծէ թէ՝ սոյն զեղծումներն խապառ կանչետին, երբ ամուսնական օրէնքներ խմբագրուին և Ա.Պ.Դայշին ժողովոյ վիճաբանութէան բանական և նէշելցական համարում ժողովուն, առաջ ու անցնելուն վշտը՝ Վ.Եհանիսուն Կանոն-դիմունք « բաշխման ժամանական: Օրէնքներ խմբագրելն և մանաւանդ վաւերացնելն խիստ դիւրին գործէ, բայց օրինաց խմբագրութիւնն ամենեին ապահով երաշխաւորութիւն չէ ամուսնական կենաց բարոքման: Ուրեմն ամուսնական կենաց ճշմարիտ բարոքման արմատն ոչ թէ օրի-

նաց իսմբագրութեան, այլ գաստիարակութեան և կրթութեան մէջ որոնելու է, և այն Աւետարանի գաստիարակութեան, Եկեղեցւոյ քրիստոնէական կենարար սկզբանց կրթութեան, և ոչ թէ այժմեան դպրոցաց մէջ աւանդուած երեւութական և աչքակապ կրթութեան մէջ, որ քրիստոնէական գաստիարակութեան հակապատկերն է ամենայն մասամբ և հետեւապէս անկրթութիւն՝ քան թէ կրթութիւն.... «Օրագիր», եթէ ժամանակի յառաջադիմութեան հետ ընթացած լինէր և իմանար, որ ամուսնական նոր օրէնքներ հաստատող ազգերն իսկ, իրենց օրէնքներէն յուսահատելով՝ սկըսած են ընտանեկան և ընկերական կենաց բարոքման համար բազմահատոր հրահանգիչ մատեաններ հրատարակել և ամեն եղծմանց, ամեն հիւանդութեանց միակ գարմանն Ճշմարիտ գաստիարակութիւնն հոչակել: «Օրագիր» անշուշտ լուսաւոր աշխարհի ընտիր խորհրդածութիւններն կջանար քաղուածել և իւրազգին հաղորդել քան թէ Եկեղեցւոյ դէմ

զինիլ ու ամուսնական նոր օրէնսդրութեան խնդիր յարուցանել և անհմուտ բժշկի նման այնպիսի դեղ առաջարկել որ աւելի մահացուցիչ է քան թէ կենդանացուցիչ ....»:

....«Եկեղեցին, եթէ ամուսնութեան նկատմամբ բազմաթիւ օրէնքներ չէ սահմանած, իւր միակ նպատակն եղած է սիրոյ սոյն միակ օրէնքն թագաւորեցնել, որ լրումն է ամենայն օրինաց և մարդարէից: Եկեղեցւոյ բռնած ընթացքն իսկա օրինաւոր է և անմոլար: Ուստի եթէ նոր օրինաց խմբագրութեան սիրահարներն շատ զմայլին իրենց օրէնքներով և համարձակին Եկեղեցւոյ անուամբ Եկեղեցւոյ մէջ մուծանել, կարծեմ թէ Եկեղեցին կստիպուի ասել այդ օրինականներուն—«Ձեր նոր օրէնքներով, ձեր քաղաքական օրինապահութեամբ, մի մտնէք իմ ծոցս. վասն զի ես անօրէն չեմ, ես Օրինագիրք ունիմ: այն է ԱՆԵՑԱՐԱՆ. փոխանակ նոր օրէնքնել խմբագրելու, իմ օրէնքներս ուսեք և այն շատ է ձեզ»:

Այս բաւ է. «Ամենայն ինչ սուրբ է պրոց,

բայց պղծոցն և անհաւատից ոչինչ է սուրբ, այլ պղծեալ միտք և խորհուրդք նոցա: Խոստանան գիտել զԱստուած, և գործովք իւրեանց ուրանան....» \*:



մարդի ամուսնութեան իրագործուելուց յեւ  
առյ ասուած է: «Վասն այնորիկ թողէ այր  
զհայր իւր և զմայր իւր, և երթիցէ զհետ  
կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան ի մարմին մի»: 1  
Ուրեմն պսակուողը պէտք է թողնէ ազգային  
տունն և ուրիշ տնից առնէ իւր ամուսինը:  
Այդ ի հարկէ այն ժամանակից կստանար իւր  
իրագործումն, երբ զանազան ընտանիքներ  
հետղչետէ սկսէին տարբերուել իրարից.  
այդ տեղ միայն սկզբունքն է արտայատուած  
այն շրջանում: երբ դեռ միմիայն ծնողնեւ-  
րըն և որդիներն էին ընտանիք կազմելու:  
Այդ սկզբունքը պէտք է անշուշտ իւր կա-  
տարելութիւնն ստանար քրիստոնեութեան  
մէջ:

Հայաստանեայց Եկեղեցին ունի չհասու-  
թեան կանոն, իւր սկզբնաւորութեան օրերից  
սկսեալ և ահա երկար դարերի ընթացքում  
գործադրուումէ: Այդ կանոնը մեծամեծ վէ-



## ԶԱՍՈՒԹԻՒՆՆ Ը Տ

ՀԱՅԱՍՏԱՆԵՍ.33 ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՆՈՆԾԴՐՈՒԹԵԱՆ

**Ա** է պսակի խորհրդի էու-  
թեան և թէ Աւետարա-  
նի հիմնական ճշմարտու-  
թեանց հետ սերտ կապ  
ունի չհասութեան սկզբ-  
րունքը: Չհասութիւնը պը-  
սակի արդեկքների մէջ նը-  
շանաւոր տեղ է բռնում:  
որ և դրաւ Աստուած այն օրից, երբ հաս-  
տատեց ամուսնութեան խորհուրդը: Ասխա-

ձերի առարկայ է, վասն զի այժմ այլընդայ-  
լոյ են հասկանում: ուստի հարկ է որոշել  
Նախ թէ ինչ սկզբանց վրայ է հաստա-  
տուած չհասութեան կանոնը:

Բ. Թոէ որո՞նք են նախնեաց կանոնները.  
Գ. Թոէ ի՞նչ կանոնով պէտք է ընթա-  
նանք:

Ա. Չհասութեան արգելման հիմնական սկզբ-  
բունքը քրիստոնէական սէրն է: Այրոյ պա-  
տուիրանն այնքան մեծ տեղ է բռնում Քրիս-  
տոսի վարդապետութեան մէջ, որ ոչ մի ա-  
ռաքելական եկեղեցի չի կարող թոյլատրել  
մի որ և իցէ կարդ դորա հակառակ սկզբուն-  
քի վրայ հաստատուած \*: Եկեղեցու ձգտումն  
է ընդարձակել ընկերական սիրոյ յարաբերու-

\*. «Եթէ ջամրիցեմ զամենայն ինչս իմ աղքա-  
տաց, և մատնիցեմ զմարմինս իմ յայրումն, և սէր  
ոչ ունիցիմ ոչ ինչ օգտիմ»: «Եթէ զլեզուս մարդ-  
կան խօսիցիմ և զհրեշտակաց, և սէր ոչ ունիցիմ  
եղէ ես իբրև զպիննձ, որ հնչէ, կամ իբրև զծընծ-  
դայս, որ զօղանջին»: Կորնթ. Ժ. 31:

թեան սահմաններն և որքան կարելի է՝ ա-  
ռաւել մեծ շրջանում կապակցել հաւատա-  
ցողներին:

Եթէ Եկեղեցին իւր բոլոր միջոցները գոր-  
ծադրէ միմիայն եղբայրների կամ ազգական-  
ների մէջ սէր հաստատելու, նա ընդարձակած  
չի լինիլ սիրոյ կտպակցութեան սահմանները,  
վասն զի ազգականք արգէն ունին սիրոյ մէկ  
և գուցէ շատ հիմնաքարեր, որպէս արիւնակ-  
ցութիւն, ընդհանուր պատիւ, յարաբերու-  
թեան յաճախումն են. և ուրեմն նա միայն  
եղած և խախտուածը կհաստատէ: Այս պէտք  
է իւր միջոցներով սիրոյ նոր կապեր կուէ, որ-  
պէս զի օր ըստ օրէ առաւելանայ այն մարդ-  
կանց թիւն, որոնք սիրոյ մի շղթայով յե-  
րիւրուումեն:

Հզօր և անխզելի են Եկեղեցու դրած կա-  
պերը, վասն զի գոքա թէ հոգեօր են և թէ  
մարմնաւոր միանդամայն, ուստի և ոչ մի ու-  
րիշ հաստատութեան կապեր չեն կարող այն-  
պէս ամուր լինել և բարերար հետևանքներով

առատ, որքան այդ աստուածային հաստատութիւնը: Ի՞նչ կարողէ բռնել Եկեղեցու տեղն, երբ մի ազգի լեզուական, երկրային, արիւնակցական, բնաւորական և այլ կապերը պսակուումեն նաև ճշմարիտ հաւատքի միութեամբ, տալով նորան ամրութեան համար ազգային բնորոշ արտայայտութիւն: Եւ ի՞նչ կարողէ փոխարինել նորան, երբ ամբողջ մարդկութեան միութեան համար ևս տալիս է մէկ ամուր կապ «քրիստոնէութիւն» բառի արտայայտած սկզբունքով, որ բնաւորուելով իւրաքանչիւր ազգի կեանքի մէջ, միանգամայն և հանրամարդկային է: Ճշմարիտ քրիստոնէութիւնն օղակ է կազմում իւրաքանչիւր ազգի միահուն կապակցութեան համար և այդ ազգերի բոլոր օղակները կապկառում է դարձնում՝ ընդհանուր մարդկութիւնը պարունակող՝ մի շղթայ: Մարդկութեան բաղկացուցիչ տարրն ազգն է՝ ազգինը — համայնքն, իսկ համայնքինն — ընտանիքը: Քրիստոնէութիւնն այստեղից է սկսում իւր այդ աստուածային սիրոյ շղթան հիւսել:

Սիրոյ այդ հիւսուածքի հիմնական հանգոյցը պսակն է, որ արգելուելով մօտաւոր ազգականների մէջ, կայանում է հեռաւորների կապակցութեամբ և ընդլայնում է սիրոյ շըրջանը: Ուչափ մօտաւոր ազգականաց մէջ տըրուփի սիրոյ այդ հիմնաքարն, այնքան սղուում է սէրը կարծուում է և հզօր զարկ է տալիս եւսականութեան զարգացման:

«Եթէ սիրիցէք զայնոսիկ, որ սիրենն զձեզ, զի՞նչ վարձք իցեն. ո՞չ ապաքէն և մաքսաւորք զնոյն գործեն» \*. ասում է սիրոյ քարոզիչն ու սիրողութեան կատարեալ օրինակը: «Սա պատուիրում է՝ «Սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր . . . . » իսկ թշնամութեան և ատելութեան վերացման քանի քանի նպաստաւոր են հանդիսանում ամուսնակցական կապերը: Այնը չէր լինիր և ատելութեան աւելի զարկ կտար ամուսնութիւնն, եթէ միայն մօտաւոր ազգականների մէջ սահ-

մանափակուէր. այն ժամանակ սէրը միայն ազգականների մէջ գոյութիւն կունենար, այս ինքն որոնց մէջ սահմանափակուումէ ամռանութեան ասպարէզը, մինչդեռ սիրոյ ամենաբարձր աստիճանն իրական կեանքում՝ ամռանութեան մէջ է ստանում իւր պսակը:

Ուրեմն որքան երկարացնենք այն կազն, որ սիրոյ ամենազօրեղ աստիճանն է պարունակում իւր մէջ, այնքան ընդարձակած կլինինք և սիրոյ շրջանն ու սահմանը: Մինչդեռ որքան կարձենք, անյբան կսահմանափակենք և ընդ նմին զարկ կտանք եսապաշտութեան:

Հոչակաւոր գերման իրաւաբան, արդարադատութեան գաղտնի խորհրդական պրօքեսոր ֆոն Շուլտէ՝ խօսելով պսակի այն մեծ նշանակութեան վրայ, որ սահմանուած է նախանակութիւնից՝ ընտանիքին՝ մանաւանդ ազգակցական և ընկերական սիրոյ վերայ ընդարձակման համար, պուումէ «Արգարե պէտք է ոչ միայն մէկ ընտանիքի անդամներն, այլ մարդկանց առաւել մեծ թիւ սերտ սիրոյ մէջ

ամփոփուի, որպէս զի սիրոյ կապերն ընդլայնուին, և նոր անդամոց միանալով, վատ տարբերն արտաքսուին ու նոր, լաւ և կենսազօր տարբեր ներս պատուաստուին: Ասկ եթէ ամռանութիւններ լինին միւնոյն ընտանիքի անդամոց մէջ, որոնք գեռ կատարելապէս գիտակից են սիրոյ սերտ կապին, այն ժամանակ ամեն մէկն իւր անձի մէջ շատ կապեր միացնելով, կտրուում: Հեռանու մէ միացեալներից և գորա բնական հետեանքն է եսապաշտութիւնը: Այսպիսով աշխարհի բարոյական կարգապահանջ է ներկայանում՝ մօտիկ ազգականաց ամռանութեան արգելքն, որ թէև անհաւասար ծաւալով բոլոր՝ ոչ լիովին ապականուած՝ ազգերի մէջ ձանաչուած էր, սակայն քրիստոնէութեան մէջ պէտք էր անհրաժեշտապէս մեծ նշանակութիւն ստանար»:

Արդ՝ Աւետարանը քարոզումէ որ Աստուած սէր է, որ տեղ սէր կայ, այն տեղ է Աստուած. պարզէ ուրեմն որ Հայաստանեայց Եկեղեցում

այն պսակը կվայելէ լիակատար օրհնութիւն,  
որ ամփոփումէ իւր մէջ աստուածային սիրոյ  
ամենաշիմսական սկզբունքը<sup>1:</sup> Կամ՝ ուրիշ  
կերպ ասած՝ այն պսակն է Աւետարանի ոգուն  
համաձայն, որ ամենից շատ զարկ է տալիս  
սիրոյ շրջանի ընդարձակման:

Ահա այս սկզբունքն է շեշտում և Ս. Ա.  
Շնորհալին՝ ասելով. «Եւ քանզի ամենայն  
փոյթ Աստուծոյ և աստուածայնոցն յաղագս  
սիրելոյ է զմիմիանս մարդկան, վասն այսորիկ  
իրաւունս համարեցան, որք Հոգւո՞ն օրինադրեցին,  
զօտարացեալսն ի միմեանց միանալ  
սիրով ամուսնութեանն կապակցութեամբ, իսկ  
զմերձաւորսն արեամբ բաւական վարկան հա-  
մազգակցութեամբն միայն ունել զհաղորդու-  
թիւն սիրոյ առ իրեարս»:

«Եւ այս է առաջին պատճառ ոչ տալոյ թոյլ

1. Աէր «ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւր, ոչ գրգ-  
ռի, ոչ խորհի դշար, ոչ խնդայ ընդ անիրաւութիւն,  
այլ խնդայ ընդ ստուգութիւն»: 1. Կորնթ ՓՊ, 5:

համացեղիցն ամուսնութեան, են և այլք յո-  
լովք՝ զորս իմաստնոցն թողաք քննել»<sup>1:</sup>

Սիրոյ այդ սկզբունքից բղիւումեն արդին և  
այլ պարագայք այսպէս զոր օր՝ սրբազնացու-  
թիւնը մօտիկ ազգականաց մէջ, ըստ սրում ազ-  
գականաց մօտաւոր և յաճախուող յարաբերու-  
թեամբն ապահովուած կինի զանազան ազգա-  
պղծութիւններից: Այսպէս և առողջ սերունդ  
ունենալու համար՝ առաւել հիմք ունինք յու-  
սալու ազգախառնութիւններից հեռու ամուս-  
նութեանց վրայ, վասն զի բազմաթիւ բժշկական  
օրինակներ ցոյց են տալիս, որ ազգախառնու-  
թեան սերունդը թոյլ և տկար է լինում մարմ-  
նապէս և հոգեպէս. այլ և թերակատար ծր-  
նունդներ յաճախ են պատահում: Ֆրանսիա-  
յում: Մինչև անդամ մարդկանց անձնական  
պահանջումնեն սւելի և աւելի շահերը շա-  
տացնել նորանոր բարեկամաց թիւն և ոչ թէ

ունեցածների շղթայով վերստին կապկըստուիլ:

Բայց թողնելով վերջին կէտերը, կշեշտենք սրբազնացութիւնը, վասն զի այդ մեծ կախումն ունի սիրոյ սկզբունքից: Ազգականութեան կապըն, Աստուծոյ շնորհումն սէրն է. այդ սէրն եղայրական սուրբ սէր է. թողնել այդ և ամուսնական կապակցութեամբ սիրել՝ նշանակումէ արհամարհել այդ սուրբ սէրն և փոխարինել խառնակութեան սիրով, քանի որ առաջինն առաւել բարձր առաքինութիւնն է քան երկրորդը:

Ահա տեսնում ենք որ մինչև անգամ չին ուխտում սրբութիւնն առանձնապէս պահանջուումէ ազգականներից: Այստեղ Աստուծուած հրամայում է չեռու կենալ հեթանոսական պղծութիւններից և իւր սուրբ անունը չպըդականական պղծութիւններով: Այս պատուիտումէ. «Հատ ամենայն գնացից երկրին եգիպտացւոց՝ յորում պանդիստեցարուք՝ մի առնիցէք, և ըստ գնացից երկրին քանանացւոց՝

յոր ես աարայց զձեր՝ մի առնիցէք, և ըստ օրինաց նոցա մի գնացիցէք»<sup>1</sup>: Եւ թուելով այն ապօրինութիւնք, որոնք օտարներից մըտնումէին չըեից մէջ, ասումէ. «Եւ մի՛ պըղծիցիք այնու ամենայնիւ. զի այնու ամենայնիւ պղծեցան ազգքն, զոր ես մերժեցից յերեսաց ձերոց. և եղեւ գարշելի երկիրն . . . .<sup>2</sup>: Այս ազգապղծողներին մինչև անդամ քարութելու և այրելու հրամանն է տրուում<sup>3</sup>:

Մովսիսական օրէնքը մի առ մի արգելումէ այն ազգախառնութիւնք, որոնք մտել էին չեթանոսական սովորութիւններից չըեից մէջ<sup>4</sup>: Այստեղ միանգամ ընդ միշտ արգելուումէ ամուսնութիւնն ազգականաց մէջ, բայց մինչև որ աստիճանը՝ յայտնի չէ: Յիշուումնն խորթմայր, հօրաքոյր, մօրաքոյր, հօրեղբօր կին, քոյր և խորթ քոյր, եղբօր արձակած կինը,

1. Դ. Կ. Ֆ. 3. 2. Անդ. 24, տես. և ի. 23.

2. Օր. Իէ. 20. 22. Եղեկ. Իբ. 10. 5. Դ. Կ. Ֆ.

Ի. 11 ևն. 4. Դ. Կ. Ֆ. 7-18. Ի. 11 ևն. 14.

17. 19-21. 4. Օր. Իէ. 20. 22 ևն.

որդու կինը, որդու աղջիկ—նոյն և կնոջ կողմից, մայր և աղջիկ միաժամանակ և երկու քոյրեր միանգամայն:

Որ այս յիշատակութիւնը լիակատար չէ՝ երեսումէ նոյն իսկ նորանից, որ հօր և իւր աղջկայ ամուսնութեան արգելքը չէ յիշուած, թէև գիտենք որ չէր կարող ընդունուիլ<sup>1</sup>: Միւս կողմից այդ օրէնքին հակառակ դէպքեր էլ լինումէին, որպէս եղբօր և քրոջ<sup>2</sup>, կամ երկու եղբայրների որդւոց մէջ<sup>3</sup>: Ուրեմն Մովսիսական օրէնքի մէջ ոչ թէ մէկ լիակատար օրէնք է տրուում, այլ միայն սկզբունքը՝ թէ ազգականների մէջ ամուսնութիւն չպէտք է լինի և այդ միայն հեթանոսական նորամուտ սովորութեանց, որոնք լրացրին այդ օրէնքի պահասութիւնները, զոր օր. վել ցնելով՝ եղբօր մահից յետոյ նուին (հարսին) առնելին, որ ըստ Մովսիսական օրինաց ոչ միայն թոյլատրուած էր, այլև հրամայուած էր<sup>4</sup>:

1. Տես. Ծննդ. ԺԹ, 31 ևն.

2. Բ. Թագս ԺԹ, 13. 5. Ա. Մնաց. ԻԳ, 22.

4. Բ. Օր. ԻԵ, 5—10. Մատթ. ԻԲ, 23.

Նոյն սկզբունքը պահպանուեց և քրիստոնէութեան սկզբի օրերում: Պօղոս առաքեալն ուղղակի պոռնկութիւն է անուանում ազգախառնութիւնը: Մինչեւ անգամ համեմատութեամբ է դատապարտում ասելով՝ «այնպիսի պոռնկութիւն՝ որ ոչ և ի հեթանոսս. որպէս թէ զիին հօր իւրոյ ունել»: Այդ այն աստիճան դատապարտելի է համարում, որ մինչեւ անգամ որոշումէ «Մատնել զայնպիսին ստանայի ի սատակումն մարմնոյ, զի ոգին ապրեսցի յաւուրն ջեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Ուրեմն քրիստոնէութեան մէջ ևս ազգականների ամուսնութիւնն արգելուած է սկզբունքով<sup>2</sup>: Այն որ հին ուխտի մէջ պղծութիւն է համարուում Աստուծոյ սուրբ անուան համար և արգելուումն պէտք է անպատճառ իւր կատարեալ և որոշ արգելքին հանդիպէր նոր ուխտի մէջ: Պօղոս առաքեալը

1. Ա. Կոր. Ե. 1—5. 2. Տես. և Մատթ. ԺԹ,

4. Մարկ 2. 17.

յիշումէ միայն իւր օրով պատահած դէպքը,  
սակայն երբ քրիստոնէական եկեղեցիները հետ-  
զիտէ կազմակերպութեցան, այնուհետև արդէն  
առաքելական աւանդութեան որոշ արտայայ-  
տութիւն պէտք է տային:

Այժմ աեսնենք թէ ի՞նչ կանոնովէր վար-  
ուում Հայաստանեայց առաքելական Եկեղեցին:

Բ. Հայաստանեայց Եկեղեցին՝ ինչպէս և  
քրիստոնէական միւս եկեղեցիք, վարումէր  
իւր ընթացքն առաքելական աւանդութեանց  
համաձայն: Պեղ յայտնի է, որ առաքեալք  
հիմնելով եկեղեցիներ, երբ որ պէտք էր լի-  
նում՝ գրումէին թղթէր և պատուէրներ տա-  
միս, սակայն յաճախ բերանացի էին աւան-  
դում: ինչ որ կարեոր էր: Պարզ բան է, որ  
նոցա յաջորդներն ևս այնքան ժամանակ կշա-  
րունակէին բերանացի աւանդութեամբ կառա-  
փարուել, մինչեւ որ եկեղեցին ընդարձակուէր  
և պէտք զգացուէր այդ աւանդութեան հիմ-  
նական կէտերի արձանագրութեան:

Հայաստանեայց Եկեղեցին կենսակից լինե-

լով Ասորոց Եկեղեցուն, ունէր դորա հետ իւր  
ընդհանուր աւանդութիւնք, որոնք և յետոյ  
գրերի գիւտի ժամանակ թարգմանուեցան  
Հայերէնի կամ անփոփոխապէս և կամ ըստ  
սեփական աւանդութեանց ձեւակերպուելով և  
Հայոց Եկեղեցուն օգտակար դառնարով\*:

Այն հիմնական աւանդութիւնք, որոնք Ա-  
սորոց և Հայոց ս. Հայրերի միջոցով խմբա-  
գրուեցան և Հայաստ. Եկեղեցու հիմնաքար  
դարձան, կոչուումէն «Առաքելական կանոններ»:  
Պոցա խմբագրողներ են առաքելական ս. Հայ-  
րերն, որպէս յիշուումէ. «Եւ արդ այսուհե-  
տեւ ամենայն ինչ որ խօսեցաւ ի Տեառնէ ի  
ձեռն առաքելոց, և առաքեալքն աւանդեցին  
աշակերտաց իւրեանց, և եղեւ հաւատարիմ և

\*. Հայաստանեայց Եկեղեցին երբէք հեղինակու-  
թիւն չէ գարձել օտար կանոններն իւր մէջ, ա-  
ռանց ըստ սեփական առաքելական աւանդութեանց  
և ըստ իւր կազմակերպութեան ձեւակերպելու:  
Վասնորոյ և ուրիշ կանոններ չէր ընդունում ա-  
ռանց իւր բարձրագոյն կանոնագրութեամբ հաստա-  
տելու.

ընդունելի յամենայն կրղմանս . . . . »: Աստ  
որում և գոցանից իւրաքանչիւր կանոն սկրս-  
ուումէ «Վարդեցին առաքեալքն և եղին հաս-  
տատութեամբ» խօսքերով:

Ուրեմն նոյն իսկ այդ կանոնները վկայում  
են թէ գոքա առաքելական աւանդութիւններ  
են, որոնք ս. Հայրերի համար մնացել են հաս-  
տատուն սկզբունքներ եկեղեցական կարգ ու  
կանոնների մէջ:

Հայստանեայց Եկեղեցին ընթացել է սկզբ-  
բեց այդ առաքելական աւանդութեամբ, որ-  
պէս և Հայհապիվանի ժողովն ասում է իւր  
կանոնների մէջ, «առաքելական և նիկիական  
կանոնքն հաստատուն կացցեն», ըստ որում  
և «որ ինչ պիտոյ է ի լրութիւն ի նոյն կա-  
նոնս և մանաւանդ ի մէջ տանս Թորդոմայ և  
կողմանց արեւելեացս՝ ապա կարգեցին . . . »:

Այդ կանոնք Հայոց Եկեղեցու առաքե-  
լական աւանդութեան նախնական կանոններն  
եին, ուսափ և Հայհապիվանի ժողովը հրամա-  
յելով որ գոքա հաստատուն պահուին, իւր

նոր կանոններով ևս ցոյց է տալիս թէ որ-  
քա՞ն ընդհանրացած են եղել գոքա ժողովը  
մինչև անդամ՝ յաճախ գոցա ոճերն ու դարձ-  
ուածքներն է յիրարկում՝ յարակից Ա. Գրքե-  
դարձուածքներին և ասացուածքներին:

Արդ, դոյն աւանդական կանոնաց մէջ գըտ-  
նում էնք մեր Եկեղեցու հիմնական կանոնը  
չհասութեան մասին, որ անշուշտ Ներսէս Մե-  
ծի օրով ակնարկուած և Աշտիշատի ժողովով  
կրկնուած կանոնն է եղել. «ինիցին ամուս-  
նութիւն օրինաւորք . . . : փախչել աւելի ի  
մերձաւոր և յազգին տոհմակից խառնակու-  
թեան ամուսնութենէն, և մանաւանդ ի մեր-  
ձաւորական նուոց, և որ գամ մի այսմ նման  
լեալ էր ինչ» ։

1. Փաւստ. Բիւզ. IV, Դ: Տես և Աբրահամ կա-  
թողիկոսի թուղթն առ. Ա. Գոշի. «Հարկեցաք գը-  
րել—պինդ ուսնել զպատուէր Հոգւոյն սրբոյ ի ձեռն  
օրինաց և մարդարէից, զորս առաքելական կանո-  
նադրութեամբ հաստատեցին սուրբ և ուղղափառ  
վարդապետք»։

Առաքելական աւանդութեան լի. կանոնում ասուած է. «Վարդեցին առաքեալքն և եղին հաստատութեամբ, եթէ ի սկզբանէ զուգեաց ամուսնութեամբ զմարդն՝ օգնական արար միմեանց և օրհնեաց զնոսա. նոյնպէս սահմանեալ և հաստատեալ հրաման առաքելական՝ սրբութեամբ զուգել յամուսնութիւն և օրինօք՝ ի ձեռն աջոյ քահանայութեան և օրհնութեամբ զուգեսցին»: Ապա բերելով Մոսսիսական հրամանը, շեշտումէ.

«Նոյնպէս սահմանեալ առաքելական կանովնաց՝ մարդ ոք մարդ առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ մի՛ մերձեսցի, կամ չնութեամբ կամ ամուսնութեամբ մինչև ի չորրորդ զարմն՝ չունի իշխանութիւն առնել»<sup>1</sup>:

Հայաստանեայց Եկեղեցու սեփական այս կանոնը հաստատուն սկզբունք է այդ խնդրում:

<sup>1</sup> «Ի ձեռն Կղեմայ, Ժէ. կանոնը թէ «Որոյ երկուս քսրս առեալ է և կամ քեռորդի, ոչ կարէ ժառանգաւոր լինել». ընդհանուր արժէք չունի, այսպատահած դէպքերի դէմէ:

այնպէս որ երկրորդ ծնունդում ամուսնացողներն և նոցա զառակները զրկուում են քահանայական արժանիքից: «Խակ զպոռնկորդիս և որ յերկրորդացն են՝ ասումէ Ս. Սահակ, նոցին հաւասար մինչև յերրորդ ծնունդ, ըստ առաջին կանոնացն հեռի կացցեն ի կարգէն և ի շնորհացն, զի սպարկեշտ և սուրբ աներկւան եղիցի ուխտ պաշտօնէից Աստուծոյ»: Այս կանոնը ցոյց է տալիս թէ ինչ մեծ նշանակութիւն ունի այդ սկզբունքը Եկեղեցուհամար: Առաքելական կանոնը կրկնումէ վերստին Շահապիվանի առ ժողովում: Այնտեղ կարդում ենք. «Որ զազդական կին առնէ՝ այս պղծութիւն և գարշանք յայտնի լիցի, և անուանեսցի մի՛ ի միջի ձերում; զի մի ոք ընդ աղտախանս յարգանդի մարմնոյ իւրոյ խառնակեսցի ըստ սովորութեան հեթանոսաց և անաստուած ամբարիշտ ազգայն, զոր հրաման առեալ մեծ օրէնուսոյց մարդարէին Մոսսիսի ի կենարաբէն թէ՝ պատուիրեա որդւոցըն Խորայէլի, մարդ ոք մարդ մի՛ մերձեսցի

առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ՝  
յայնել զառականս նոցա, և յանէծան գրէր  
Մովսէս թէ անիծեալ որ ննջիցէ ընդ ազգա-  
կանի արեան իւրոյ:

Արդ մի՛ ոք որ զաստուածպաշտութիւն և  
զքրիստոնէութիւն զգեցեալ և զարունական  
մլրտութիւն զկնիք և զդրոշմ զարբունական,  
զքոյր կամ զքեռորդի կամ զեղբօրսրդի կամ  
զհօրաքոյր, կամ զայլ ոք յազդի անդ իւրում  
մինչև ի չորրորդ ծնունդն կին զոք մի՛ իշխեա-  
ցէ առնել զի մի՛ պատառումն եղիցի սուրբ  
հաւատոյն, քանզի բարկութիւն անձին իւ-  
րում գանձէ այնպիսին: Որդի անօրինի թե-  
րակատար եղիցի և զաւակ անօրէն անկողնոց  
մի՛ բողբոջեսցի. զի թէ զկին եղբօր իւրոյ՝  
մեծի մարգարէին և կարապետի Յովհաննու  
պլուխն կտրեցաւ, ապա զինչ ևս աղէտս չը-  
համարեցուք, որ զազգական իւր կին առնէ,  
զոր ոչ հրամայեն օրէնքն քրիստոսականք և  
սուրբ առաքեալքն՝ աշակերտքն Քրիստոսի:

Արդ եթէ ոք ընդդիմացեալ օրինացս և

հաստատեալ կանոնիս, և ամբարշտեալ ի հե-  
թանոսութիւն և ի հրէութիւն կործանեսցի,  
ընդ նոսին եղիցի և բաժին նորա և ի Արքոյ  
Եկեղեցւոյ օտարացեալ եղիցի.....»:

Տեսնումենք որ Յահապիվանի ժողովը հիմ-  
նուումէ տռաքելոց հրամանի վրայ և բացէ  
ի բաց արգելումէ ամուսնութիւնն «մինչև ի  
չորրորդ ծնունդն», որին հակառակ ընթա-  
ցողներին սոսկալի պատիմներ է նշանակում  
և նզովում: Անշուշտ այդ «մինչև ի չորրորդ  
ծնունդն» խօսքը համար բոլորովին հաս-  
կանալի արտայայտութիւն է եղել և բացատ-  
րութեան կարօտ չէր:

4. Դորա Նախընթաց կանոնն էլ ասումէ... Եթէ  
ոք զկին հօր իւրոյ ունիցի, ոչ ընդունի զնա կա-  
նոնս և ի ս. Եկեղեցի նա մի մոցէ և յամենայն  
ժողովս, նզովեալ լիցի մինչև դարձցի և ապաշխա-  
րեցէ.... Եթէ հայր զորդւոյ կին ունիցի, կամ եղ-  
բայր զեղբօր, նոյն պատուհաս և նզովք լիցին, այլ  
զջերմ հարազատի և զազգականի զկին ոք մի իշ-  
խեցէ ունել ի կնութեան...»: Այս կանոնը յա-  
ճախ կրկնուումէ այլ կանոնագրութեանց մէջ:

“Սոյն հիմնական կանոնը յիշատակուումէ և Ներսէս թ. Աշտարակեցու պատժական կանոնաց մէջ՝ որ տեղ ասուած է.

«Վասն զազգական կին առնելոյ զերբորդն»:

«Կանոնագրքերից շատերի մէջ դրուած է «զե. երդն մի իշխեսցէ»՝ սակայն այդ հին սիսալ պէտք է համարել վասն զի նախ որ զորան հետեւում է «և զչորրորդն. ամ ողջ բառով գրուած և ուրեմն առաջինն էլ բաւական կլինի և ոչ դասական թուով. Երկրորդ՝ եթէ հինգերորդը արգելուած լինի՝ միմայն չորրորդը չի կարող լնդ ապաշխարանօք լինել. Երրորդ՝ չորրորդի և երրորդի կանոնազանցութեան գէմ կարգադրութիւն է անում. ինչպէս կարող էր հինգերորդի համար ոչինչ չասել՝ թէ արգելուած էր. Սխալը յառաջացել է «Ե.» տառի առանձին կարգալուց և ըստ երեսյթին շատ հին է. Իսկ եթէ ուղիղ համարենք «զհինգերորդն», այն ժամանակ այդ պէտք է բացատրուի թէ հինգերորդը գժուարութեամբ թոյլատրել՝ որպէս զի կանոնազանցութիւնը դիւրաւ չկատարուի»:

Սակայն ես հետեւում տրամաբանական իմաստին և մանաւանդ մի մագաղաթեայ հին օրինակի ընթերցուածքին. այս օրինակը գեղեցիկ ընթերց-

մի' իշխեսցէ և զչորրորդն ապաշխարեսցէ և երրորդքն մեկնեսցին և ապաշխարեսցեն»:


Բայց երբ որ այս կանոնը ժամանակի ընթացքում աչքաթող արին, Արքուն կաթուղիկոսը ստիպուեց վերստին նորոգել այդ հրամանն, ըստ որում և Պարտաւի ժողովի (768<sup>9</sup>) որոշմանց մէջ կանոնագրումէ.

«Յառաջն առաջին սուրբ հարքն յիւրեանց ժամանակս արգելին զազատս և զանազատս յարեան մերձաւորութենէ. այժմ առ մեօք լուծեալ տեսանեմք՝ մանաւանդ ապատաց՝ զկանովն և հարցն, զի անխտիր խառնին ընդ իւրեանց մերձաւորսն անկարգ առնեսնութեամք զուգեալ. յայսմ հետէ ցըրրորդ զարմ մի' իշխեսցեն ամուսնութեամք զուգիլ ապա թէ ոչ՝ նզովեսցին ի մէնջ և ինքեանք տացեն պատասխանի Աստուծոյ ի մեծութեան նորա դատաստանի»:

Այսպիսով Հայաստանեայց Ակեղեցու հիմնական կանոնը հրամայուումէ հինգ դար շարունակ և յետոյց: Մեզ մնումէ այժմ պարզել թէ ի՞նչէ այդ «մինչև ի չորրորդ ծնունդ» խօսքերի իմաստը:

ուածքներ շատ ունի: Ումանք էլ ունին «ցհինգերորդն մի իշխեսցէ» այսինքն որ հինգերորդք կարող են պսակուիլ, այս ևս կարելի է ուղիղ համարել.

Մենք պէտք է նախապէս որտնէինք թէ, ինչ  
օրէնք կամ ինչ սովորութիւն կար չոյաս-  
տանում նախ քան քրիստոնէութիւնը. սա-  
կայն ոչինչ տեղեկութիւն չունինք այդ ժա-  
մանակից: Հտստատուն տեղեկութիւններ ու-  
նինք միմիայն հռովմէական պետութեան օ-  
րէնսդրութիւնից: Հին հռովմէական օրէնքը  
հաշուումէ այսպէս.



Եթէ գ և գ պսակուեին, այդ կհամարուել  
երկրորդ աստիճան կամ ծնունդ. և և գ՝ եր-  
րորդ աստիճան. ե. և զ՝ կարող էին պսակուել  
բայց չեին կարող ամուսնանալ գ և տ (խորթ  
որդի) և ոչ գ ու լ:

Անշուշտ պետութեան մէջ եկեղեցին ևս  
կյարմարուել այդ օրէնքներին: Բայց ահա  
չորրորդ գարում՝ Թէոդոս Մեծն արգելեց ե.  
և զ. ի այսինքն թոռնակիցների ամուսնու-  
թիւնը, մինչդեռ նորա յաջորդ Արկատիոսը  
վերացրեց այդ արգելքը:

Սակայն Զ. գարում բիւզանդեան եկեղե-  
ցին արգելեց նախ ե և զ. ի այն է՝ թոռնա-  
կիցների ամուսնութիւնն և յետոյ նոյն դա-  
րում նաև է. և լ. այսինքն ծոռներինը: Ու-  
րեմն վեցերորդ աստիճանի պսակն արգելուած  
էր և միայն թ. և ժ. կարէին ամուսնանալ:

Արգելքների այդ յաջորդական ընթացքը  
ցոյց է տալիս, որ Յիւզանդեան եկեղեցին մա-  
քառումէր չին հռովմէական սովորութեանց  
դէմ: Բոլոր հետաղօտութիւնից երեսումէ, որ

չհասութեան արգելքը զնումէին այն աստիւ-  
ճաններում, ինչ աստիճաններում ցեղակից-  
ները աղջոկանէր էին համարում: Ուրիշ կերպ  
ասած, այն անձինք, որոնք ազգականներ էին  
համարուում ժողովրդի մէջ, չէին կարող պը-  
սակուիլ:

Յայտ է որ Բիւզանդեան եկեղեցում չհա-  
սութեան կանոնն օրշատօրէ և զարգացել մինչ-  
դեռ Հայոց Եկեղեցում մի և նոյն կանոնն է  
կրկնուում: Տեսնենք արդեօք մեր մատենա-  
գիրները միջոց չե՞ն աալիս որոշելու Հայոց  
կանոնի որպիսութիւնը:

Մովսէս Կաղանկատուացին պատմումէ, որ  
Ը. դարի կիսում «իինի առնակնութիւն իշ-  
խանացն Աղուանից: Վարազոյ՝ Վախտանգայ  
որդի, թոռն Վարազմանայ, զթոռնակիցն իւր  
Վարդանուհին արար իւր կին. և Տէր Մի-  
քայէլ տարագեեալ զնա թէ մի՝ յանդգնիր  
առնել զի թոռունք էք»:

Խշանը չէ լսում և յենուելով Վրաց Կա-  
թուղիկոսի ապօրինի թոյլտութեան վրայ:

պսակուումէ: Միքայէլ Կաթուղիկոսը ժողով  
գումարեց Մաքենոցաց վանքի առաջնորդ Առ-  
զումնի (յետոյ Հայոց Կաթուղիկոս) հետ և  
նզովեցին Վարազոյի տունը: Պատմիչն ասում-  
է որ անմիջապէս «հասանէին Տաճիկը, և ի  
դուք մօքն փողոտեցին սրով, և զմիւս որդին ձի  
տարեալ սպան» <sup>4:</sup>

Թոռների ամուսնութիւնն այնքան ծանր  
յանցանք էր, որ ըստ երեսոյթին նման պատ-  
ճառներից ստիպուեց Ամոն Կաթուղիկոսը  
ժողովով նորոգել վերցիշեալ կանոնը: Առ-  
հասարակ Աղուանից երկրում ազգաշաղախ  
ամուսնութիւնք յաճախ էին պատահում: որ-  
պէս տեսնում ենք Ծ. դարի վերչերում պա-  
տահած անցքերից: Նոյն պատմիչն ասումէ,  
(Ո, լբ):

«Ընդ այսոսիկ ապա ժամանակս տարօրէն  
խառնակութեամբ պլխաւորք ազգաշաղախ Աղ-  
ուանից աղծպիղծ եղեալ, նախ՝ թագաւորազն  
տէրն Կողթայ տունն, ապա յԱրշակաշէն գա-

4. Պատմութիւն. Պարիզ Ա, Ժ Գ:

ւառի երեք տուն դաստակերտացն՝ Ծնդմեայն,  
Մամշեղուն և կուր գետոյն յայնկոյս՝ տունն  
չեփերոյ. և յՈւտի գաւառն ի Գիս՝ Վարազ—  
Փերոժի տուն, որ ղաքնար ունէր պատիւ, և  
Վարաժանու սպասատունն, որ յԱրաժականն  
նստէր, և յուերակու տունն: Գսոցա ամուս-  
նութիւնն երանելի հայրապետն Ուխտանէս  
անիծիւք փակեաց. և անդարձ լեալ ի գտեալ  
չարեացն՝ ամենեքին առ հասարակ բնաջինջ  
եղեալ սատակեցան յերկրէ»:

Այս տեղից երեսում է արգէն, որ Հայոց ե-  
կեղեցին մէծապէս մաքառում էր ազգախառ-  
նութեանց դէմ: Թրոռնակիցների ամուսնու-  
թիւնը մինչև անդամ իշխանների մէջ արգել-  
ուում էր և հակառակ դէպէում նզովում:  
արդ ուրեմն ո՞ր աստիճանն էր թոյլատրուում:

Թրոռնակիցների պսակն ըստ Հռովմէական  
օրինաց չոլրորդ աստիճանումն է. վերև տե-  
սանք, որ հակառակ դորան Ներսէս Բ-ի կա-  
նոնն ասում է թէ «զչորրորդն ապաշխարեսց»:  
այլ և եթէ մեր նախնիք ըստ Հռովմէական

թուարկութեան կանոնադրած լինէին, Աղուա-  
նից Վարազոյ իշխանին չէին նզովել, կամ մի-  
այն ապաշխարանք կնշանակէին ըստ Ներսէս  
Բ-ի: Պարզ է ուրեմն որ Հռովմէական հաշիւը  
մեզ պէտք չի գալ: Պէտք է ուրիշ հաշիւ  
որոնենք:

Զ. գարից ունինք Աբրահամ կաթուղիկո-  
սի թուղթն, որ թէև փոքր ինչ մուլթ է,  
սակայն բաւական պարզում է մեր հարցը:  
Այն տեղ կարդում ենք Մովսիսական օրէնքի  
բացարութեան մէջ, «Հրաժարեցուց յառա-  
ջին ազգէն և ապա յերկրորդէն, և հասեալ  
յայն՝ զոր մեք խորթս կոչեմք՝ և ասէ՝ մի՝

1. Առ Միիթ. Գօշի. Դատաստ. Ա. Էջմիածին.  
1880. էջ. 219: Գօշն ունի և իւր բացայայտութիւ-  
նը՝ սակայն միայն ըստ Մովսիսական օրինաց անձ-  
նական հետեարանութիւն է, որպէս ինքն է ասում  
(տես. էջ. 225 – 229): Ամրող գրուածքն առ հա-  
սարակ մասնաւոր՝ կամ նոր ոճով ասած՝ գիտնական  
և ոչ եկեղեցական՝ ուսումնասիրութիւն է, ուստի  
և քիչ կապ ունի Հայոց Եկեղեցու սկզբանց հետ:

յայտներ զի համհօրեայ քոյր քո է։ Եւ ասպա  
յետ ոչ սակաւ բանից ևս զարմանալոյ ար-  
ժանի իմն նշանակէ։ Քանզի իբր ասաց թէ  
համհօրեայ քոյր քո է, դարձեալ երկրորդէ  
այսպէս թէ՝ զառականս կնոջ և զգստեր նո-  
րաւ — որ լինի մին կին և միւսն խորթ, — մի՝  
յայտնեցես և զգուստը ուստեր նորա, — այս-  
ինքն է՝ զիորթին, — և կամ զգուստը դստեր  
նորա մի՝ առնուցուս, քանզի ամբարշտութիւն  
է։ Ասպա վերագոյն քան զայս նշանակէ, ոյ նայն  
ժակ Երրորդ աղի հարժէն ըստ յառաջ յայտնա-  
գոյն է առնելոյ մեր, զառականս դստեր ուստեր  
քոյ կամ դստեր դստեր քոյ մի՝ յայտնեցես։

Բայց մի՝ ոք կարծեսցէ զասացեալս ի վերայ  
ծնողին միայն, այլ և ուժ է նմանէն։ Քանզի այս  
կատարեալ յիմարութիւն է։ Քանզի ոչ ուրուք  
եղբայր առանց հօր և կամ քոյր, այլ թէն  
հօրաքեռ որդի և կամ մօրաքեռ, +...նի՞ և  
աղիսից -նի-նն մի և նայն է և ուլուցց։ Զի որդէն  
առաջն և Երիշ և Երիք աղի առէն, այսուհետ և  
է բօր ու ույն և ի ամ այլ ա մի Ենու առաջն

աղի և և Երիսրուն և Երորդն և +աւուրդ աղի առէն։  
Այս տեղից արդէն տեսնում ենք որ Արքա-  
համ կաթուղիկոսը 608-թուին և յետոյ հրա-  
մայումէ թէ իւր բոլոր եպիսկոպոսներին և  
թէ Աղուանից (?) կաթուղիկոսին՝ պինդ պա-  
հել առաքելական կանոնադրութիւն, որ հաս-  
տատուած է վերստին Ա. վարդապետների վրձ-  
ռով, ըստ որում և բացատրումէ որ չորրորդ  
ազգը պէտք է երկու կողմից զոյդ զոյդ հաշ-  
ուել որ կինի 8 աստիճան։ Մինչեւ անգամ  
Պովսիսական օրէնքի վրայ իրաւունք ունի  
յենուելու, վասն զի այն տեղ ասուած է։

«Զառականս կնոջ եղբօր քոյ մի յայտնեա-  
ցես, զի առականք եղբօր քում են։ Զառա-  
կանս կնոջ և զգստեր իւրոյ մի՝ յայտնեցես։  
Զգուստը ուստեր և զգուստը դստեր նորա մի՝  
առնուցուս՝ յայտնել զառականս նոցա, զի  
ընտանիք քո են։ ամբարշտութիւն է»։<sup>1</sup> Իսկ  
այս կինի՝

1. Դ. Ա. Ժ. Ժ. 16.

Մինիթար Գոշն կո երկու կողմերից է հաշուած

եղբայր	ա	եղբայր	թ	դ
0		0	կին	
			ե	
ուստր	թ	0	գուստր	
			է	
գուստր	զ	0	գուստր	

Եթէ առ առնել դին, այդ արդէն աստիւ-  
ձաններով հաշուած՝ կդառնայ չորս, առա-  
ւել ևս չեռու, եթէ է.ին առնէ: Ուրեմն  
Արքահամ կաթուղիկոսը չէր կարող «ազգ»  
«զարմ» «ծնունդ» բառերը միական աստիճան-  
ներ հասկանալ, ապա թէ ոչ Շահապիվանի  
ժաղովը ևս չէր կարող արգելել թէ «զջերմ»  
հարազատի և զաղգականի զիիս ոք մի՛ իշխես-  
ցէ ուսելի զնուրեան.....: Այլ և Ներսէս  
Սեծը չ.ր արգելել նուին առնել որ հօրեղ-

չորս չորս թէւ Մովսիսական օրէնքն հետեւելով՝  
պակասեցնումէ և ներում չորս և երեք, երեք և  
երեք ևն:

բօր որդու կինն էլ է, \* այսինքն չորրորդ աս-  
տիճանում: Աակայն ինչպէս էլ լինի՝ կաթու-  
ղիկոսի խօսքերը ցոյց են տալիս, որ նա երկ-  
երկու է հաշուում, այսինքն մէկ կողմից չորս  
և միւս կողմից չորս:

Ահա այսպէս հասկանալի է դառնում և  
Ներսէս թ-ի խօսքերը թէ «երրորդքն մեկնես-  
ցին», այսինքն «երրորդ» բառը յօդնակի դարձ-  
նելով՝ լինումէ երկու կողմից երկու «երրորդ»  
ազգերի ամուսնութիւնը: Իսկ եթէ հռովմէա-  
կան աստիճաններով լինէր, երրորդ աստիճա-  
նում կինէր, եթէ եղբայրն ուզէր եղբօր աղ-  
ջիկը. բայց այդ ոչ միայն աներեւակայելի է,  
որ պատահէր Հայոց Եկեղեցում, այլ և չէր  
լինիւ «երրորդքն»:

Ըստ այսմ աղդականութիւնը վերջանում  
է առներով և յետոյ ուրեմն կարեն պսակ-  
ուիլ կոռները: Ի բայց որովհետև Յկեղեցին ունի

\* Փաւստոս. IV, ԺԵ.

Դ. Մինչև այժմ էլ Պարաբաղում ասում են՝  
«կոռներն իրար առնումեն»:

նաև մեղմացուցիչ աստիճան՝ կանոնից սակաւ հեռացողների համար, ուստի առները՝ կպը սակուին միմիայն ապաշխարտանօք:

Այդ ասում է և Աբրահամ՝ կաթողիկոսը թէ՝ «բայց եթէ արեան յարիւն ոչ տաս խառնել որ Դնվան անոն Երշաբերդունուն աղաւի, արդայս-նետք հարաբետ ուղրդարեն դու վեհակ»:

Ուրեմն որքան հեռու լինի ամբուժիւնն ազգախառնութեան հետքերից. այնքան աւելի արդար կինի պսակը: Սակայն անհնարին է այդպէս միանգամից վերացնել ժողովրդի վատ կրքերն և ծշմարտութիւնը յանկարծակի արմատացնել: Ուստի և ասումէ:

«Իսկ յանդինելոցն և պատերազմակիրաց ընդ

ներսէս Բ-ի Զ. կանոնը թէ՝ «վասն երկրորդաց որ՝ եթէ թողցեն՝ Փեւ. ամ արտաքոյ և Ե. ընդ օրինօք Եկեղեցւոյ», նոյն է ապացուցում: որ չի կարող եղօր և քրոջ ամուսնութիւնը լինել».

2. «Առն« բառը ցոյց է տալիս, որ դոքա ևս կարող են եղել դիւրաւ իրար առնելու:

Հոգւոյն Արքոյ՝ բան կանոնն զար Երանելի Հարց է Քրիստոս հասարակութեալ և և մինչև ցայծմ Տէրե պարեժակն անշէջանէլի պահանի. նոցա զայս աւանդեցես—սկիզբն ի հինգերորդէն յառաջ»:<sup>\*</sup>

Ուրեմն ազգականութեան մերձեցողների համար սահման է դնում: որ հինգերորդ «ազգից» դէպի առաջ և ոչ թէ դէպի յետ՝ ամուսնութիւն թոյլատրեն, «քանզի որ յանառնց բնու նիւն անը լի է անհանելի այնց ողորմութիւն արարեալ զսահմանն մեղմացուցին, բայց լաւացն բնիկն է, որում տեղեակ է և քո սըրբութիւնդ»:

\*.  
Տես. և Քարսզի Մժե. կանոնը. «Եթէ ոք յիւր արենէ և ի մերձաւորէ խնամութիւն առնէ մինչև ի չորրորդ և ի հինգերորդ ազգն պատկն անվաւեր լիցի և պսակադիրն լուծցի . . . . .»: Եւ ՀՅ. «Եթէ ոք առնու կին ի մերձաւոր արենէ իւրմէ մինչև ի վնցերորդն և եօթներորդն, նզովեալ եղիցի, և մեկնեսցեն ի միմեանց առաջնորդքն, և վասն պըսակին անարգելց Ճ. դրամ տուգանս տացէ յեկեղեցին . . . . .»: Ինչպէս երևումէ նոյն կանոններն են եղել նաև Կապադովիկիոյ և Ասորոց Եկեղեցիներում:

Արդ քանի որ եկեղեցին մանաւանդ չայաս-  
տանեայց Եկեղեցին, բանութեածն չէ ուզում  
սրբութիւն հաստատել ժողովրդի մէջ, այլ  
համոզելով, դաստիարակելով և կրթելով, ուս-  
տի միջոց է տալիս իւր սուրբ կանոնին հա-  
կառակողին, որ հետզետէ զզջայ և քաւէ  
իւր կանոնազանցութիւնը: Վասնորոյ և առ-  
ների ամուսնութիւնը չէ արգելում երբ ուրիշ  
ելք չկայ, բայց ապաշխարանք է նշանակում:  
որ դրուումէ ըստ կարողութեան և հանգա-  
մանաց (նուիրատուութեամբ յօդուտ եկեղե-  
ցու, դպրոցաց և այլ հաստատութեանց, ո-  
ղորմութեամբ յօդուտ աղքատաց, եկեղեցի  
յաճախելով և աղօթելով և այլն): Ահա այս  
է արտայայտում Ներսէս Բ-ի կանոնը թէ՝  
«զորբորդն ապաշխարեսցէ»: Այս թոյլառուու-  
թիւն է ընդ առաջարկութեամբ, վասն զի Հայոց  
Եկեղեցին կտրական կանոն չէ դնում կենսա-  
կան հանգամանքների մէջ ժողովրդի բուռն  
և հրապուրական կրքերի դէմ: Այս ապաշխա-  
րանքը զգուշութեան միջոց է, որպէս զի ա-

ռաքելական և Շահապիվանի կանոննը չխախտ-  
ուի և երրորդաց մէջ հեշտութեամբ ամուսնու-  
թիւն չպատահի:

Եկեղեցին դատապարտում է մեղսագոր-  
ծութիւնը, սակայն ոչ թէ բացէ ի բաց ար-  
գելումէ մեղք գործել քանի որ այդ անկա-  
րելի է կատարելապէս սխալական մարդու հա-  
մար, այլ զզջալու և ապաշխարելու միջոց է  
տալիս, որպէս զի կարենայ հետզետէ դաս-  
տիարակել նոցա: Միմիայն հիմնական սկզբանց  
դէմ մեղանչող լրբերին է, որ բանադրումէ  
և դուրս ձգում եկեղեցուց, մինչև որ արտա-  
սունքով յետ գան իւրեանց ընթացքից:

Պոյնն է և ամուսնութեան մէջ. մեղք գոր-  
ծող կանոնազանցը պէտք է ապաշխարի, երբ  
որ նա անկարող է չփործել այդ: Եկեղեցին և  
աղօթումէ նորա համար, որ զօրանայ և ձըշ-  
մարտութիւնը ճանաչէ: Ակայն թոռնակցու-  
թեան սրբութիւնը պղծողին ուղղակի նզո-  
փումէ:

Հայաստանեայց Եկեղեցու չհասութեան կա-

Նոնը կրկնումէ և միջին դարերում ըստ ուրում Ներսէս Շնորհալին գրումէ. «Մի ոք համազգեաց՝ որոց արեան մերձաւորութիւն էցէ, պսակ օրհնութեան կիցէ, այլ մինչև ի յերկուց կողմանցն զշորբորդ ազգին զլսաւութիւն կատարեալ ունիցին»։<sup>1</sup>

Ա. Շնորհալին վերստին հրամայումէ այն, ինչ որ նախնիք հրամայել էին: Այդ կանոնն էական է չար կրքերի գեմ ուստի և ամենից շատ կրկնութեան կարօտ է:

Քայց ահա ռովմէական եկեղեցին Ե. գտարից սկսեալ չափազանց խստացրեց իւր արդելքն: Հին գերմանները պահանջումէին որ երկու կողմից երեք երեք ծնունդ հեռու լինին պսակուղները, իսկ չռովմէական եկեղեցին թողեց հին չռովմէական հաշիւն ըստ ասաիճանաց, սկսաւ թուել զոյդ զոյդ և արդելք մինչև եօթներորդ ազգը<sup>2</sup> այսինքն 14. դ

1. ԸստՀ. Էջ. 84:

2. Այդ եղաւ Թ. դարում և իւր վերջնական ձեռք կանոնագրուեց Նիկողայոս Բ.-ի օրով 1058 թուին:

աստիճանը: Այս արգելն չլսուած արգելք էր, որ կար Ա. Շնորհալու ժամանակ և պահուեց մինչև ԺԴ. դարի սկիզբը: Միայն 1215 թուին իննոկենտիոս Գ. վերացրեց հինգերորդ, վեցերորդ և եօթներորդ ազգի ամուսնութեան արգելքը, թողնելով միայն չորրորդ ազգի, այսինքն 8-դ աստիճանի սահմանը: Աս այդ արաւ Լատերանի 4 դ ժողովով, (կանոն 31.)— այն ևս զործնական դժուարութեանց պատճառով: Այդ ժողովը թոյլատրումէ նոյնպէս ամուսնութիւնը կոռների, կամ մի կոռնի և մի խորթ թէ հարազատ ծոռնի մէջ: Այս կանոնով է վարուում չռովմէական եկեղեցին մինչև այժմ:

Արդ՝ տեսնումենք որ Ա. Շնորհալին ամենեւին չէ հետեւում այդ արեւմտեան խստութեանց և պահպանումէ իւր եկեղեցու մեղմ կանոնը: Հարկաւ, որքան պահպանուի ազգակցական սկըն առաւել հեռաւոր ցեղակիցների մէջ, այնքան լաւ է և համաձայն է քրիստոնէական վարդապետութեան, սակայն Հայոց

Եկեղեցին չէ տարածում իւր արգելքն աւելի քան ծոռների աստիճանն, որոնք ամենուրեք մերձաւոր ազգականներ են համարուում:

ԺԴ. դարում պատերազմական խառնակութեանց հետեւց մի անկեալ վիճակ, այնպէս որ «կարգ ամուսնութեան սուրբ օրինացն բարձաւ, և հեթանոսօրէն արիւն ընդ արեան խառնէին, զազգականս առնելով, և զորս կամէին թողուին, և զորս կամէին առնուին ...»: | Կոստանդին Ա. կաթուղիկոսը տեսնելով այդ խառնակութիւնը, ժողով գումարեց Ասում 1243 թուին և քննելով հանդամանքները, հրամայեց առանձին կոնդակով:

«Գպասակն ընարութեամբ արացեն, վեց ծննդովք հեռացեալք յազգակցութենէ արեան»:<sup>2</sup>

Առաջին անդամ աչքի է զարնում ընթերցողին, որ իբր թէ կոստանդին Ա. արգելքները խստացնումէ, սակայն իրօք այդպէս չէ:

1. Կիրակոս. ԼԹ. 2. Անդ. ԽԱ.

Այս նոր կանոն չէ ուզում՝ դնել և իւր կանոնների համար շեշտումէ՝ «սահման չափաւոր և դիւրագործ՝ քաղեալ ի կանոնաց և ի հրամանաց Հարցն սրբոց, ի պէտա եկեղեցականաց և աշխահականաց»: | Ուրեմն կոստանդին հրամայումէ վերստին նոյնն, ինչ որ կանոնադրել են իւր նախորդները: Յայտ է որ այդ «վեց ծննդովք հեռացեալք» խօսքերն արտայալտումեն նոյնն, ըստ որում մէկ ծընունդ են ծննդք, միւս ծնունդ են պսակուողներն և մէջ աեղը մնում է չորս ծնունդ՝ այսինքն՝ որդիք, թոռներ, ծոռներ և առներ:

Այսպէս է ասում և այդ կանոնները բերող Վարդան մեծը. «Ի չորս ծնունդ ի մէջն է ըստ չորից տարերց կատարման: Եւ առաջին ծնողն, ուստի յառաջ եկին չորս ծնունդն. և հինգերորդն՝ որ լինի խնամութիւն. լինի այս վեց ազգ»:

Ահա այսպէս պահպանուումէր ազգական-

1. Կիրակոս. ԽԱ.

ների չհասութեան կանոնը անցեալ դարերում։ Այդ վերջին հրամանից յետոյ զանազան վարդապետներ չեն ենում նախագծուած սահմանից։

ԺՊ. դարի սկզբում Եսայի Խչեցին դնում է առ Տէր Մատթէոս եպիսկոպոսն Արտատականի զրուած թղթում Ա. Սերսէս Շնորհալու խօսքերը բառ առ բառ ընդօրինակելով։<sup>1</sup> Նմին նման կրկնողէ հանդիսանում նոյն ժամանակ ապրող Յովհան Երդնկացին († 1326):<sup>2</sup> Այդ է պնդում ու այդ կանոնին է յարում և Յակով Ղրիմեցին ԺՊ. դարի վերջերում։

Այս կանոնն է ճանաչում և Ա. Գրիգոր Տաթեացին,<sup>3</sup> ասելով. «Իսկ օրինացն ազգն որ են խնամիքն, և բանականն որ են մարմնականքն, ոչ լինին խնամիք մինչ ի Դ. Ճնունդն»։

1. Ճռաբաղ. 1861. էջ. 207.

2. Սինոդի կանոնագիրը, կանոն ՌԸԼ. Ե.

3. Հարցմանց գիրք. էջ. 612.

Բայ որում և յարումէ դորան Ա. Ե. Շնորհալու պատճառաբանութիւնը։

Ա. Գ. Տաթեացին յիշումէ և. եօթն պորտի տեսութիւնն, որից երեսումէ որ այդ ժողովրդական կանոնը շատ հին է. և այդ է եղել առաջնորդող սկզբունք։ Եօթն պորտը նոյն է թէ եօթն աստիճանն, որից յետոյ ամուսնութիւնը թողլարուումէ։ Հայ ժողովրդի կանոնական այս գեղեցիկ բանաձեռ պէտք է պահել իբրև ազգային արաւայրաւութիւն, քանի որ «աստիճան» բառը նոր է.

Գ. Արգ՝ չհասութեան կանոնն արգելումէ որդուոց, թոռանց և ծոռների կամ թոռնիաների պատին։ Իսկ ծոռների որդիք, այսինքն առները միայն մեղմացրած արգելք ունին. լաւ է եթէ գոքա ևս ազգականութեան սէրը պինդ պահէին, բայց եթէ անկալող գտնուին զսպերու իւրեանց կրքերն, այն ժամանակ կամուսնանան, միայն թէ լաւ գիտենալով՝ որ այդ աստուածահանոյ չէ և ուրեմն պէտք է ուրիշ բարեպաշտական զոհարերութեամբ, ա-

զօթքով և բարեգործութեամբ քու են իւր  
եանց յանցանքը՝ սիրագրուժ կեանքով շարա-  
բաստիկ շմինելու համար։ Այս մեջ ք. մ.

**Ըստ այսու։**

Ճնողք զնամաք մանարդով  
Ճնողք զնամաք մանարդով բարձրացնաւու  
առաջանաւ լուս ու առաջանաւու մանարդով ճնո-  
ղք զնամաք մանարդով առաջանաւու մանարդով ճնո-  
ղք զնամաք մանարդով առաջանաւու մանարդով ճնո-  
ղք զնամաք մանարդով առաջանաւու մանարդով ճնո-

**Ճ 0 Թոռներ 0 Ճ**  
Ճնողք զնամաք մանարդով ճնո-  
ղք զնամաք մանարդով ճնո-

**Թոռներ**

Յօ. և Ժ. կարող են ամենայն տեղ թոյլա-  
տրուիլ թէև այստեղ ես քահանան պար-  
աւաւոր է յիշեցնել քարոզով, որ առաւել  
աստուածահաճոյ կինէր թէ տարբեր ընտա-  
նիքներից լինէին ամուսինները։ Լ. և Ռ. կա-  
րող են միայն անելանելի հանգամանքներում  
ամուսնանալ, բայց ընդ ապաշխարանօք, նոյն  
կանոնին կենթարկուին նաև Ե. և Զ. նոյն-  
պէս և Ե. և Ր. ամուսնութիւնք այսինքն մէկ  
զծի առնը միւս զծի ծոռնի հետ, թէև այս  
առաւել ծանր է։

Վերընթաց և Վայրընթաց գծերում ի  
հարկէ ոչ մի կերպ թոյլատրելի չէ։ Թոռնա-  
կիցների ամուսնութիւնը նզովում է և չի կա-  
րող վայելել չի բողբոջիլ ինչպէս մեր Ա. Հայ-  
րերն ասում են։ Այդպիսի պսակներն անվաւեր  
են և պսակագիրն պէտք է կարդալուծ լինի։  
Նոյն կանոնին է ենթարկուում նաև ծոռնե-  
րի ամուսնութիւնը։

Խորթութեանց մէջ էլ մեր նախնիք ոչ մի  
տարբերութիւն չեն դրել այնպէս որ ոչ մի

ակդրունք չկայ կանոնը մեղմացնելու խորթութեանց հանգամանքներում։ Այսն աստիճանները մնում են նաև խնամութեանց նկատմամբ։ «Եւ որպէս ի մէջ արենազգացն ոչ լինի խնամութիւն մինչեւ ի չորբորբ ծնունդն Այոնպէս և ի մէջ խնամոցն ոչ լինի այլ խնամութիւն մինչ ի գո ազգնու։<sup>1</sup> Վերջապէս «մինչի գո ծընունցն է» արդելքը հոգեոր ազգականութեան (առազանին ծննդեամբ) համար, մինչդեռ որ գերական հոգիոր ազգականութեան մէջ «ոչ լինին խնամիք մինչեւ ի կրկին ծնունդն»,<sup>2</sup> այսինքն միայն երրորդ ծնունդն է թոյլատրելի, իսկ երկրորդն ապաշխարելի։

Այս կանոններն արդէն վերջնականապէս ուրոշում են չհասութեան տարիճանները։ Միայն թէ մեղմացուցիչ ասպաշխարանքը խնամութեան մէջ գուցէ աւելի կարելի լինի թեթևացնել՝ քան թէ բռն ազգականութեան մէջ։ Եւ եթէ լսւաւորչեան աթօնի առաքե-

<sup>1.</sup> Ա. Տաթևացի. աւդ. էջ. 611. 2. Աշդ.

լական գահակալը կամենայ հրամայելի որ հոգեթոր վարչութիւնք թոյլատրեն առների ամուսնութիւնն ընդ ապաշխարանօք<sup>3</sup> և ըստ Հայաստանեայց եկեղեցու կանոնական իրաւանց, այն ժամանակից դորանից պակաս աստիճաններում անխուսափելի ամուսնութիւնք կախուած կմնան միմիայն Հայրապետական բարեհայեցողութիւնից։

Խսկ այդպիսի անխուսափելի գէպքեր կլինին միշտ որոնցից իւրաքանչիւրն ևս կունենայ իւր մասնաւոր և չնախատեսուած պարագայք՝ կարոտ բարձրագոյն իշխանութեան նորանոր կըշադրատութեանց, թէ արդեօք չէ տուժում Եկեղեցու կանոնական սկզբունքը։ Հայրապետական բացառիկ թոյլատրութիւնք կունենան և իւրեանց կարեւոր բացատրութիւնք, որոնք օգտակար և կրթիւ կլինին թէ ամուսնացողների և թէ առ հասարակ ժողովրդի համար։ Հար-

<sup>1.</sup> Ա. Դ. Թոյլատրելը կախուած է իւրաքանչիւր Հայրապետի այն վստահութիւնից՝ որ նա տածում է գէպի Հոգեոր վարչութիւնք կամ Ա. Սինոդը։

կաւ այդ թոյլտուռութիւնք Վիրականանանան առասնացողների երկիւզած նուիրաբերութիւն եամբ յօդուտ եկեղեցու և աղքատաց ըստ Հայրապետական համաձայնութեան, որոնք միշտ կապուած կլինին եկեղեցի յաճախելու և ազօթելու պայմանի հետ: Մինչդեռ ուղղակի ըմբոստ կանոնազանցները \* կպատժուին ըստ կանոնագրական պատժական սկզբանց:

Հայրապետական թոյլտուռութեան իրեւ հակիրք և գեղեցիկ օրինակ աւելորդ շիլինիլ երկարել Եփրեմ Կաթուղիկոսի կոնդակը: Ահաւասիկ.

«Թուղթ առ Դիէան Տփևիսու Մերսէս Սրբազն Արքեպիսկոպոսն:

Յիսուսի Քրիստոսի ծառալ ևն: Արութեամբ շնորհաց ամենաառւրբ Հոգւոյն և քահանայապետական սիրոյ և աղօթից ձօն-

\* Հատ անդամ գիմագրութիւն կը տեսնուի նաև այն մարդիկներէն, որոնց բուն պաշտօնն էր կրօնական—բարյացական զարգացման սպասաւորելու, Սիօն. 1875. էջ. 157 (նամակ Մ. Վ. Մուրատեանի).

մամբ՝ առաքեմք զողջոյն Փրկչական ի զօրաւնալ քեզ սիրելոյ և հարազատի որդւոյ Մեծի Գահոյս Ա. Լվմիածնի՝ Մերսէս զիտնաղարդ Արքեպիսկոպոսիդ, կայսերախնամ քաղաքիդ Տփևիսու, և մնալ յաւերժ ի կեանս խաղաղուսա՝ ի մեր սրտի բախսանս բազում ամէն:

Յերեսնեաին պատկաւորին տարւոյ՝ դրոշմալն ի քէն զիտաւորութիւն բանից ի քարտի անդ վերածանեալ ի մէնջ եղեւ ի նորում պամի տարւոյս, որով և ծանուցաւ իսկ ժայռամատոյց խնդիր ձեր յաղագս յարդելի կնեազ Մանուչարի Որումանով դատեր, զոր խօսեցեալ են ընդ աղնիւ Հեղիմ աղայի որդւոյ պարոն Զաքարիայի:

Արդ ուրասցի ապաքէն աստանոր լայողն զբաղմաց, թէ վեհ է ինձ խնդրոց յաջմէ և յահեկէ՝ քանզի այն ինչ բանք են կնքողաբար ի կանոնս Հարյուն սրբոց ի սակս այգանեաց հաշուոց Ճուղից, յայանի իմն է յօդունց առաւել սիրելոյդ և որ ինչ առաջիկայ անձկութիւն են, տեարց դստերաց, բացափայլ և ս

Ե. ըստ որում աշխարհի թակարթաղար պատահմամբ, ուստի խոհեմաքար տեսանի յիւսաստասիրութիւն Անձանդրեայ, յասելի թէ՝ «բուսար» հարսնացու թէ և ինչ ոչ խօսեսցի զանձնէ, լռութիւն նորա բազմախողս և Աւբաւիցեն հարիսր աչք Արգոսի զբուշանալ ի պահպանութիւն Յովայ, իրրե զերինջ կոյտառերոյ ի պատրանաց Նիերսէսի»:

ԱՄԴ՝ որովհետեւ կոյսն եղեալ ընդ չափ ըստ առաքելոցն՝ և վտանդ ևս ի վերայ կայ, և հաստատեալ է ծնողն ի սրտի իւրում, վասն ամենայնի պատճառաց, և մեք հայելով ի հանգսմանս ամենայն, ի վիճակն ի ժամանակն ի յարմարութիւն և ի յօժարութիւն կամաց առնելեաց և ի խնդիր ձեր սիրելութեան և ազնիւ կնեաղին, ներելով յարիսք առ հրամանն՝ լինել լրումն կամաց ձերոց և որոց են առ սյն իշխ խորհրդոց, ընտանեացն ասեմ՝ նշանաւորաց:

Ա. Ա. մի՛ լիցի զանց առնել ըստ կանոնաց զնոքոք Մօրն Եկեղեցեաց նայեցեալ լինելոյն

իրականութեանց և զօրութեան առաջադրաց այնմ, մանաւանդ չափմամբ չափելով զիւրեանց մեծանունութիւն և պատիւ՝ ծանիցեն ևն: ՈՂջ լիր Եին չնորհօք, որ և մնամք աղօթանուեկը վասն ամենացուն և բարօրութեան ձեր ցանկացող Կաթողիկոս ամենայն Հայոց Վշառլի Եփրիմ:

Ա. յս արդեն շատերից մի օրինակ և՝ թէ ինչպես Եին վարուում Հայոց Կաթողիկոսք, երբ հանդամանքների այնպիսի վիճակում Եին զանուում ամուսնացոյներին, որ անհրաժեշտ եր լինեաւմ ներողամարդարար ուղղելու հնարքների զիմմել Ակերջին կաթողիկոսները նման գեղքերու մ գործ Եին ածում «ոչ յօրինակ պլոց» խօսքերը ստկայն բաղձալի և, որ միշտ յիշուին թէ այդպիս ներսպամիտ լինելու պատճառներն և թէ կանոնազնութեան թեւ թեւթեացուցիւ արաշխարանքներն, որոնցով կարողանուած են սիրայոյզ ամուսիններն ամոքուել խոյս տալ վերջնական կորստից զլչալ և պատ-

ռսիրանապահութեամբ բարեկեցին լինել չայոց  
Եկեղեցաւ աստաւածային շնորհների ասկի:

«Բայց՝ այսոցիկ բարւոյ աւանդութեանց հա-  
կառակելոց առաջնոց չարցն սրբոց՝ ոչ այլ ինչ  
է պատօնառք քան թէ տպիառ թիւն և լիքնօ-  
րէն անձնահաճ կամապաշտութիւն՝ որք ոչ  
տեսին զառացին պայծառութիւնս մինչ ողոր-  
մութեամբ Տեառն լի էր երկիր .....» \*



## ՈՒՂՂԵԼԻՔ:

Տպուածէ՝			Արդարուէ՝
եւ	ո՞ւ		
4	1	ներքեւից	պծէ
80	10	վերեւից	ի զբա
88	ծանօթ.	ամուսնանա- լու նման	ամուսնալու ծ- ման
89		գողթականու- թիւնները	գայթակղու- թիւնները
101	9	միացեալներից	յնացեալ- ներից
100	4	սիրոյ վերայ	սիրոյ
103	7	յարաբերու- թեամբն	յարաբերու- թիւնն
	2	անձնական պա- հանջումնեն աւելի- կ աւելի շահերը	անձնական շա- հերը պահան- ջումնեն աւելի- կ աւելի շաս- ցնել
104	6	շնորհումն	շնորհած
106	5	սովորութեանց որոնք	սովորութեանց պատճառով Դորան ապացուց և մերս Հայրե- րըն որոնք . . .
113	11	կրկնում	կրկնուում
114	7	իւրոյ.	իւրոյ ունելոյ

Էջ.	Թար.	Վ.	Տառական	Բառական
116	5	վ.	ծան. բաւական	բառական
122	6	ն.	նղովում	նղովուում
123	2	վ.	նղովել	նղովիլ
126	1	ն.	արդելել	արդելել
128	ծանօթ.	2		
132	1	վ.	կրկնում	կրկնուում
139	8	ն.	նղովում	նղովուում
142	10	վ.	երկարել	բերել
143	8	վ.	վերածանեալ	վերծանեալ
.	6	ն.	խնդրոց	խորոց
144	3	վ.	Մեծանդրեայ	Մենանդրեայ
.	5	»	բաղմախոզ	բաղմախօս
.	8	»	ներսէսի	Ներմէսի
.	10	»	վոանդ	վասնդ



4/2

ՀՀ Ազգային գրադարան



NL0596884

